

ՄԱՐԶԻԿ

հսլս

مارزقك

مجلة رياضية شهيرة
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

30րԴ ՏԱՐԻ, 2011, ԹԻԻ 10 (352) - VOL. XXX N° 10 السنة الثلاثون - العدد العاشر

ՆՈՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԻՒՆ,
ՆՈՐ ՀԻՄՆԱԳԻԾ, ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ



Հ.Ս.Ը.Մ.Ի
ԿԻՍԼՈՒԿԱՆՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Հ. Հ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՈՂՁՈՅՆԻ ԽՕՍՔԸ Հ.Մ.Ը.Մ.Ի 10ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ

Երևան, 5 Սեպտեմբերի 2011 թ.

Սիրելի՛ հայրենակիցներ,

Սրբալուսից ողջունում եմ ձեզ՝ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միության 10րդ Ընդհանուր Ժողովի պատվիրակներին: Ձեր կազմակերպությունն իր ուրոյն առաքելությունն ունի մայր Հայաստանում եւ Սփիւռքում մեր մայրաղ սերունդը հայեցի, առողջ եւ հայրենասէր դաստիարակելու գործում:

Ուրախ եմ, որ Հ.Մ.Ը.Մ.ի այս Ընդհանուր Ժողովը փեղի է ունենում Հայաստանի անկախութեան 20րդ փարեղարչի օրերին: Իր հարուստ պատմութեան ընթացքում Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միությունը մեծ դեր է կատարել աշխարհասփիռ հայության կեանքում: Անկախութեան հաստատումից ի վեր կազ-

մակերպությունը հաստատուեց նաեւ մայր Հայաստանում՝ նպաստելով հայրենիքի եւ փարբեր գաղթածախների միջեւ կապերի զարգացմանը եւ համագործակցութեանը:

Սիրելի՛ բարեկամներ,

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միության 10րդ Ընդհանուր Ժողովին մաղթում եմ բեղմնաւոր աշխատանք: Հաւատում եմ, որ ձեր ազգանուէր եւ հայրենասիր գործունէութիւնը շարունակելու է ընդլայնուելու ի փառս Հայաստանի եւ աշխարհասփիռ հայ ժողովրդի:

Ձեր գաղթածախներին եւ ընկրանիքներին մաղթում եմ նորանոր յաջողութիւններ, շեռքերումներ եւ նուաճումներ:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ



Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ



ատգամաւորական 10րդ Ընդհանուր Ժողովի աշխատանքներու աւարտին, Շաբաթ, 10 Սեպտեմբեր 2011ին, Պատգամաւորական Ժողովը ներկայացնող պատուիրակութիւն մը, բաղկացած՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ընթացաւարտ եւ նորընտիր անդամներէ, Պատգամաւորական Ժողովի դիւանէն եւ «Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագիրէն, այցելեց Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանին, Ծաղկաձորի մարզահամալիրին մէջ:

Այցելութեան ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ի պատուիրակութիւնը նախագահ Սերժ Սարգսեանին ներկայացուց միութեան վերջին շրջանի աշխատանքները ընդհանրապէս եւ Հայաստանի մէջ կատարած իրագործումները յատկապէս: Այցելութիւնը

առիթ մը եղաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ը նախագահ Սարգսեանին ներկայացնէ նաեւ Հայաստան-Սփիւռք գործակցութեան իր պատկերացումները եւ յառաջիկայի ծրագիրները:

Նախագահ Սերժ Սարգսեան Հ.Մ.Ը.Մ.ի պատուիրակութիւնը ընդունելով շեշտեց Հայաստանը համայն հայութեան ուշադրութեան կեդրոնը դարձնելու անհրաժեշտութիւնը: Ան անդրադարձաւ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններու ամրապնդման պետական նախաձեռնութիւններուն եւ դիտել տուաւ, որ հզօր ու կազմակերպ Սփիւռքը լայն հնարաւորութիւններ կ'ընծայէ Հայաստանի հզօրացման ու բարգաւաճման:



MARZIG

SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN

مارزیک مجلّة رياضية شهرية تصدرها جمعية الهولمتن الرياضي

Թիւիւն հիւիւն երը



Մարզական ամսաթերթ
Հրատարակութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

30ՐԴ ՏԱՐԻ, 2011, ԹԻՒ 10 (352)



10ՐԴ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ - ԾԱՂԿԱԶՈՐ, ՀԱՅԱՍՏԱՆ

■ Խմբագրական	2
■ Պետական ներկայութեամբ եւ ազգային շուքով	3
■ Նոր ռազմավարութիւն, նոր դիմագիծ, զարգացման նոր հեռանկարներ	6
■ Փառաշուք ծաշկերոյթ-պարահանդէս	28
■ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին պատգամը Հ.Մ.Ը.Մ.ի 10րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին	31
■ «Բարձրացի՛ր-բարձրացրու»՝ յաւիտենական մի առաջնորդող	32
■ Հ.Մ.Ը.Մ.ի առանցքը պետք է ձեւաւորուի Հայաստանի Հանրապետութիւնում	33
■ Հ.Մ.Ը.Մ.ը հսկայական դեր ունի կատարելու	34
■ Գաղափարականութեան վերադարձը	34
■ Ազգապահպանման ու հայակերտման մարտահրաւերներէն անդին	35
■ Նոր մտքերով աշխատանքների հորիզոններ բացել	36



■ Անհրաժեշտ է նոր մտածողութիւն մեր ամենօրեայ աշխատանքներում	37
■ Մենք պարտադրուած ենք միասնական լինել յանուն հզօր Հայաստանի ու հզօր Սփիւռքի	38
■ Արդիւնաւետ աշխատանք	39
■ Անգնահատելի ջանքեր	39
■ Խոհեր քառամեակի մը աւարտին	40
■ Յայտարարութիւն	

ԽՄԲԱԳԻՐ
Վիզէն Աւագեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ
Սեդա Պէշլեան, Սեւան Նազարեան


«ՄԱՐԶԻԿ»Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ
Պատրիկ Կիւլպէնկեան
Աբօ Մոսիկեան

Գօգօ Մկրտիչեան
Վահան Համամճեան
Տիրան Շահինեան
Սալբի Ճեճեան
Վահէ Թանաշեան

ԱՅՍ ԹԻՒԸ

«Մարզիկ»ի այս թիւը
ամբողջութեամբ նուիրուած է
Հ.Մ.Ը.Մ.ի 10րդ Պատգամաւորական
Ընդհանուր Ժողովին: Առ այդ,
թերթին ընթացիկ բաժինները
դուրս կը մնան անկէ:

Էջադրում - Արշօ Պալեան
Գրաշարութիւն - Շողիկ Պոյաճեան
Colour Seperation - Photogravure Paklayan
Կողքի Ձեւաւորում - Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ
Պուրժ Համուտ, Գինիչեանի Թաղ
«Սեւան» Շէնք, Գ. Յարկ
Հեռ: 01/248043, Fax: 01/260117
E-mail: marzig@homenetmen.org
P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՏՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին
հատավաճառի սակն է 4000 Լ.ո.:
Տարեկան բաժանորդագրութեան
սակ ծշղուած է 48000 Լ.ո.:
Լիբանանէն դուրս թերթին
բաժանորդագրութիւնը
կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Մեկուսի
եւ Շրջանային Վարչութիւնները:
Թերթը ուղղակի Լիբանանէն
կը ստացուի անձնական
բաժանորդագրութեամբ
(Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
եւ Եւրոպական երկիրներ \$70,
Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$75):



ՆՆԲԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՈՍՏՈՒՄԸ

Դիրին-դիրին ոստումներ չեն կատարուիր միութիւններու կեանքին մէջ: Ժամանակի եւ պայմաններու հասունացում կ'ենթադրէ աւանդականն եւ ընթացիկէն դուրս գալու յանդգնութիւնը՝ չփորձուածը, նորն ու տարբերը որդեգրելու համար:

1974ին էր առաջին ոստումը, միութեան հիմնադրութենէն 56 տարի ետք, երբ Զ.Ս.-Ը.Ս. աշխարհացրի մասնաճիւղերէ վերածուեցաւ համագաղութային ներկայացուցչութեամբ եւ համասփիւռքեան ժողովարարութեանը հզօր կազմակերպութեան մը, որ տասնամեակներու աշխոյժ գործունէութեամբ նոր էջ բացաւ հայ մարգական եւ սկաուտական պատմութեան մէջ:

Տարիներու թաւալքին հետ, 1974ի ոստումը շատ բան սպառեց իր ներքին հզօրութենէն: Հաւատքն ու եռանդը չպակսեցան, սակայն աշխատանքի պայմաններն ու ըմբռնումները փոխուեցան, որովհետեւ օրէ օր վտանգուեցան մեր ինքնուրոյն գոյութիւնը, իւրայատուկ դիմագիծը եւ հաւաքական ուժը: Հետեւաբար, պահանջը զգացուեցաւ նոր շարժումի մը, փոփոխութեան մը, որ պիտի վերականգնէր միութեան կենսունակութիւնը եւ պիտի աւելցընէր ազգային կեանքին անոր բերած աւիշը, ջանքն ու ծիգը:

Պատմական ոստում մըն էր ակնկալուածը: Դժուար, սակայն ոչ անկարելի ոստում մը, որ համագաղութային այս միութիւնը այս անգամ պիտի վերածէր իր ժամանակի ամենէն արդիական, նորարար, ստեղծագործ ու մեծագործ միութեան:

Պատմական այս ոստումն էր, ահա, որ իրականացաւ միութեան 10րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին, Ծաղկածոր, Հայաստան, որդեգրուածովը ռազմավարական ծրագիրի մը, որ ճշդեց միութեան յառաջիկայ տասնամեակներու տեսլականը, հիմնական առաջադրանքները, անոնց գործադրութեան ձեւն ու ժամանակը եւ այս բոլորին հետեւելու եղանակը:

2011ի ոստումը գլխաւոր թիրախ ունեցաւ երիտասարդութիւնը, որուն համար միութիւնը առաջադրեց յատուկ բաժանումը:

մունքի մը ստեղծումը, սկաուտական եւ մարգական իր զոյգ բաժանումներուն կողքին:

Զ.Ս.Ը.Ս.ի պատմութեան մէջ դժուար թէ գտնուի ժողով մը, ուր այնքան շատ մտածուած ու խօսուած ըլլայ երիտասարդութեան մասին՝ որքան 10րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը, որուն առաջնահերթ մտահոգութիւնները եղան երիտասարդութեան ներգրաւումը, միութեանակա՞ն միջավայրի մէջ պահպանումը եւ անոնց համապատասխան աշխատանքային նոր դաշտերու ստեղծումը, նկատի ունենալով Հայաստանի եւ գաղութներու պահանջները, իւրաքանչիւրը տարբեր՝ իր ենթամշակոյթով ու զանգըլածով:

Պատգամաւորական ժողովը կարեւորութեամբ շեշտեց երիտասարդութեան երթալու, հասնելու պահանջը: Երթալ՝ արդի արհեստագիտութեան ընծեռած բոլոր կարելիութիւններով, երթալ՝ «հայ լեզուի, պատմութեան եւ Զ.Ս.Ը.Ս.ի աշխատանքներուն նպաստող մշակութային ձեռնարկներով», երթալ՝ կազմակերպական նուազ պահանջկոտ մօտեցումներով:

Պատգամաւորական ժողովը նաեւ ընդգծեց, որ Զ.Ս.Ը.Ս. լոկ խմբապետներ ու ախոյեաններ արտադրող հաստատութիւն մը չէ, այլ՝ ժողովուրդի՛ն կազմակերպութիւնն է, իր ժողովուրդին հոգերուն, ակնկալութիւններուն եւ կարիքներուն հետ ապրող միութիւնն է, որ ունի հարազատ ժողովուրդին ամբողջականութեան մաս կազմելու, մէկ ամբողջութեան պատկանելու պայծառ գիտակցութիւնը եւ այդ ամբողջութեան համար տեսաբար գործելու յանձնառութիւնը: Այս մօտեցումով ալ, Պատգամաւորական ժողովը քննեց հայ մարդուն ազգային ինքնագիտակցութիւնն ու հպարտութիւնն ներշնչող բոլոր ազդակները եւ անոնց զարգացման անհրաժեշտ նախադրեալները ճշդեց ռազմավարական իր ծրագիրին մէջ:

Առ այդ, Զ.Ս.Ը.Ս. իր 10րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովէն ետք այն չէ՛ ինչ որ էր անկէ առաջ: Պատմական ոստումը կատարուած է: Յաջողութիւնները տեսանելի կը դառնան շուտով:



10րդ ՊԱՏՄԱՒՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ ԲԱՑՈՒՄԸ

ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՀՈՒՔՈՎ

Ամիսներու նախապատրաստական աշխատանքներէ ետք, Երկուշաբթի, 5 Սեպտեմբեր 2011ի յետմիջօրէին, Ծաղկածորի «Մալթի Ռէսթ Հաուս» պանդոկին մէջ իր աշխատանքներուն սկսաւ Հ.Մ.Ը.Ս.ի 10րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը, մասնակցութեամբ միութեան Երջանային եւ Մեկուսի 18 Երջաններու 92 պատգամաւորներու եւ հրաւիրեալներու:

Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին բացումը կատարուեցաւ պաշտօնական հանդիսութեամբ մը, որուն ներկայ գտնուեցան Հայաստանի Ազգային Ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային Ժողովի աշխատակազմի ղեկավար Գեղամ Ղարիպչանեան, Հայաստանի փոխ վարչապետ Արմէն Գէորգեան, նախագահ Սերժ Սարգսեանի աշխատակազմի անդամ Աւետիս Պէրպէրեան, երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Արթիւր Պետրոսեան, կրթութեան եւ գիտութեան նախարար

րի տեղակալ Մանուկ Մկրտչեան, Սփիւռքի նախարարի ներկայացուցիչ Ա. Անդրէասեան, Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ Նաթան Եպս. Յովհաննիսեան, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Լեւոն Մկրտչեան, Համագաղայնի եւ Հ.Մ.Ա.Կ.ի Կեդրոնական Վարչութիւններու անդամներ Մասիս Պաղտասարեան եւ Հրաչ Զարիֆեան, հիւրեր, հրաւիրեալներ ու Պատգամաւորական ժողովի կազմի անդամներ:

Հայաստանի քայլերգին կատարումէն ետք, հանդիսութեան բացման խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Ս.-Հ.Մ.Ա.Կ.ի Վարչութեան ատենապետ եղբ. Բագրատ Եսայեան: Ան բարի գալուստ յայտնեց ներկաներուն եւ յաջողութիւն մաղթեց ժողովի աշխատանքներուն: Եղբ. Եսայեան ըսաւ, որ «Աւելի քան 70 տարի Սփիւռքի մէջ Հայապահպանման աշխատանք տանելով, Հ.Մ.Ը.Ս. վերադարձաւ Հայաստան եւ իր գործով արժանացաւ բոլորին գնահատանքին, որուն ապացոյցը կու տան այսօր հանդիսութեան ներկայ պետական ներկայացուցիչները: Այսօր, Հ.Մ.-



Եղբ. Բագրատ Եսայեան:

Հայաստանի մարմնամարզի եւ երիտասարդական հարցերու նախարարին ողջոյնի խօսքը կը փոխանցէ աշխատակազմի ղեկավարը:



Ը.Մ. իր արժանի տեղը ունի ո՛չ միայն Սփիւռքի, այլեւ Հայաստանի երիտասարդական կազմակերպութիւններու շարքին»:

Ապա, ողջոյնի խօսք արտասանեց Իրանի Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութեան ներկայացուցիչ Հրաչ Զարիֆեան: Ան ըսաւ, որ միշտ սերտ եղած են գաղափարակից քոյր միութիւններու՝ Հ.Մ.Ա.Կ.ի եւ Հ.Մ.Ը.Մ.ի յարաբերութիւնները ու Հ.Մ.Ա.Կ. վայելած է Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին ջերմ վերաբերումը: «Նկատի ունենալով աշխարհում առաջացած արդիականացած հնարաւորութիւնները ու երիտասարդութեան առաջընթացը այդ ուղղութեամբ, պէտք է նոր մտքերով աշխատանքների հորիզոններ բացել երիտասարդութեան առջեւ ու օգտուել իրենց մտքերից կազմակերպչական աշխատանքներում, ու նաեւ ուշադրութիւն դարձնել ժամանակակից գոյութիւն ունեցող հարցերը իրենց նկատմամբ», շեշտեց ան (խօսքերը ամբողջութեամբ տեսնել էջ 31-39):

Համազգայինի կեդրոնական վարչութեան անդամ Մասիս Պաղտասարեան յայտնեց, որ մեր ժողովուրդը շատոնց բարձր գնահատած է Հ.Մ.Ը.Մ.ի կատարած աշխատանքը՝ լայն շարքերով մասնակցելով անոր աշխատանքներուն: «Մեր ժողովուրդը հաւատացել է ձեր հռչակած արժէքներին, ամէն կերպ աջակցել ու խրախուսել է ձեզ, Հ.Մ.Ը.Մ.ը համարել է իրենը», ըսաւ ան:

Պաղտասարեան նաեւ շեշտեց, որ «Չափազանց մեծ է եւ պարտաւորեցնող անցեալի ժառանգութիւնը: ...Եղբայրական սիրոյ միջնորդութիւնը ծնուած որոշումների շահառուն լինելու է հայ մարդը, նրա ընտանիքը, Հայաստանի Հանրապետութիւնը եւ հայութիւնն ընդհանրապէս»:

Իր կարգին, Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան ատենապետ եղբ. Գրիգորիս Պողարեան անդրադարձաւ հայ երիտասարդութեան դիմագրաւած մերօրեայ դժուարութիւններուն ու տագնապներուն: Ան ընդգծեց Հ.Մ.Ը.Մ.ի դերն ու առաքելութիւնը՝ երիտասարդութիւնը առաջնորդելու մարզական եւ սկստական նորանոր իրագործումներու, ի

ինդիր հայակերտման ու հայապահպանման վեհ նպատակին: «Կատարուելիք աշխատանքները իրենց տարողութեամբ եւ ապագայի հաշուոյն ունենալիք անդրադարձով շատ ծանր բեռ մը կը դնեն 1007 Պատգամաւորական ժողովի մասնակիցներուն ուսերուն: Կը հաւատանք, որ մասնակիցներէն իւրաքանչիւրը գինուած Հ.Մ.Ը.Մ.ի վսեմ գաղափարախօսութեամբ եւ խորապէս գիտակից իրեն վստահուած առաքելութեան, լաւագոյնս պիտի կատարէ իրմէ պահանջուածն ու ակնկալուածը», հաստատեց եղբ. Պողարեան:

Հ.Յ.Դ. Բիւրոյի խօսքը փոխանցեց Լեւոն Մկրտչեան: Ան ողջունեց Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական ժողովին գումարումը Հայաստանի մէջ եւ յայտնեց, որ Հայաստանի անկախութեան 20ամեակի նախօրեակին տեղի ունեցող այս ժողովը կոչուած է գոհացում տալու մեր հայրենիքին, մեր ժողովուրդին եւ մեր երիտասարդութեան դէմ ցցուած մարտահրաւէրներուն: «Արդէն սփիւռքեան չորրորդ, հինգերորդ սերունդն է որ փորձում է պահպանել իր հայկական գոյութիւնը: Հայաստանեան բեկորներ յայտնուել են Սփիւռքում: Այս փոխ յարաբերութիւնների, ձեւաւորուող նոր գաղթօճախների, հսկայական պահպանման, այս մեծ առաքելութեան մէջ Հ.Մ.Ը.Մ.ը հսկայական դեր ունի կատարելու համար», ըսաւ Մկրտչեան:

Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին Հայրական պատգամը Ընդհանուր ժողովին ընթերցեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան անդամ եղբ. Կարպիս Գապասագալեան: Իր պատգամին մէջ, Արամ Ա. Կաթողիկոս նկատել կուտար, որ Հ.Մ.Ը.Մ. «Դարձաւ հայ ժողովուրդի հարազատ ոգիին, ամուր կամքին ու պայծառ տեսիլքին շօշափելի արտայայտութիւնը մեր կեանքէն ներս: Ան դարձաւ դէպի յաղթանակ ընթացող մեր հաւաքական երթին ջահակիրը: Ան դարձաւ մեր բարոյական, մշակութային ու ազգային բիւրեղ ապրումներուն ու արժէքներուն անլուելի գանգակատունը՝ իր կեանքին ու ծառայութեան մէջ կեդրոնական ներկայութիւն դարձնելով հայ եկեղեցին, իր հոգեմտաւոր աւանդութիւններով, հայ մշակոյթը՝ իր հարազատ արժէքներով, Հայաստանը՝ իր վառ երազներով»: Շարունակելով, Արամ Ա. կը հաստատէր, որ «Հ.Մ.Ը.Մ.ը երբեք չդաւաճանեց իր դաւանած սկզբունքներուն, արժէքներուն ու նպատակներուն, հակառակ Սփիւռքի դժուար ու տխուր պայմաններուն: Ան գործեց ու ծառայեց ամբողջական հայութեան ու ամբողջական Հայաստանի հաւատքով ու տեսիլքով»:

Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին Հայրական պատգամը Ընդհանուր ժողովին ընթերցեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան անդամ եղբ. Կարպիս Գապասագալեան: Իր պատգամին մէջ, Արամ Ա. Կաթողիկոս նկատել կուտար, որ Հ.Մ.Ը.Մ. «Դարձաւ հայ ժողովուրդի հարազատ ոգիին, ամուր կամքին ու պայծառ տեսիլքին շօշափելի արտայայտութիւնը մեր կեանքէն ներս: Ան դարձաւ դէպի յաղթանակ ընթացող մեր հաւաքական երթին ջահակիրը: Ան դարձաւ մեր բարոյական, մշակութային ու ազգային բիւրեղ ապրումներուն ու արժէքներուն անլուելի գանգակատունը՝ իր կեանքին ու ծառայութեան մէջ կեդրոնական ներկայութիւն դարձնելով հայ եկեղեցին, իր հոգեմտաւոր աւանդութիւններով, հայ մշակոյթը՝ իր հարազատ արժէքներով, Հայաստանը՝ իր վառ երազներով»: Շարունակելով, Արամ Ա. կը հաստատէր, որ «Հ.Մ.Ը.Մ.ը երբեք չդաւաճանեց իր դաւանած սկզբունքներուն, արժէքներուն ու նպատակներուն, հակառակ Սփիւռքի դժուար ու տխուր պայմաններուն: Ան գործեց ու ծառայեց ամբողջական հայութեան ու ամբողջական Հայաստանի հաւատքով ու տեսիլքով»:

Ժողովին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. Ներսիսեանի օրհնութեան եւ ողջոյնի խօսքերը փոխանցեց Նաթան Եպս. Յովհաննիսեան: Ան ըսաւ, որ «Հայ իրականութեան մէջ կ'երեւի թէ վերջին տասնամեակներում է որ աւելի սկսուեց լսուել Հ.Մ.Ը.Մ. անունը: Կար ժամանակ, երբ մենք ընդամենը ասում էինք «Հայ սկսուեցին», եւ որոնք կարծես թէ հակառակորդն էին Սովետական Հայաստանի մէջ եղած պիոնէրութեան: Սակայն, այդ մէկը գնաց, իսկ սա աւելի քան

ինը տասնամեակէ ապրում է, գործում է եւ իրողութիւն է մեր կեանքի մէջ»:

Շարունակելով, Նաթան Եպս. անդրադարձաւ մեր կեանքը յուզող երեւոյթներուն եւ ըսաւ. «Այսօր, համակարգչային դարում մարդիկ ուծացման են գնում եւ չեն շփում զմիմեանս, այլ նրանք հեռաւորութեան վրայ են եւ այսօր Հ.Մ.-Ը.Մ.ն է որ գալիս է երիտասարդներին բերելու մէկտեղ, ապրելու, մտածելու, միասին հոգ տանելու ազգի ապագայի, իրենց իսկ անձի ապագայի մասին: Ահաւասիկ, այս ամէնը շատ արժեւորում է մեր կողմից եւ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին մշտապէս սատար է եղել եւ կարող է նաեւ հպարտութեամբ ասել, որ հայ առաջին Հ.Մ.-Ը.Մ.ականներից մէկը դարձաւ մեր եկեղեցու մեծագոյն դէմքերից մէկը՝ Երջանկայիշատակ Վազգէն Առաջին Կաթողիկոսը, որը ոչ միայն Վազգէն Առաջին եղաւ, այլեւ՝ սկսուտ առաջին կարող ենք կոչել»:



Այնուհետեւ Սփիւռքի Նախարար Հրանոյշ Յակոբեանի ողջոյնի խօսքը ընթերցեց նախարարի ներկայացուցիչ Ա. Անդրէասեան: Խօսքին մէջ, Յակոբեան կը հաստատէր, որ «Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը ստեղծուեց Հայոց Յեղասպանութեան հետեւանքով աշխարհասփիւռ եղած հայ երիտասարդներին համախմբելու համար եւ աւելի քան ինը տասնամեակի ընթացքում Հայրենիքում եւ Սփիւռքում ծաւալեց մարզամշակութային բեղուն գործունէութիւն եւ առողջ մարմին կոփելով՝ դաստիարակեց Մայր Հայրենիքի

ու հայ ժողովրդի ազգային նկարագրի եւ ժառանգութեան հանդէպ սիրոյ ու նախանձախնդրութեան զգացումով»:

Հայաստանի երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարին խօսքը ընթերցեց աշխատակազմին ղեկավարը: Ան փոխանցեց «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան ղեկավար Գագիկ Ծառուկեանի ջերմ ողջոյնները եւ մաղթանքները՝ համագործակցելու ու աջակցելու Հ.Մ.-Ը.Մ.ին:

Հանդիսութեան վերջին խօսքը արտասանեց Ազգային Ժողովի աշխատակազմի ղեկավար Գեղամ Ղարիպջանեան: Ազգային Ժողովի նախագահ Յովիկ Աբրահամեանի անունով ան ողջունեց ներկաները եւ յայտնեց, թէ «Երիտասարդութիւնն այն ուժն է, որ իւրաքանչիւր երկրի ու հասարակութեան կեանքում թարմութիւն եւ ակտիւութիւն է բերում»: Ան նշեց, որ Հայաստանի Ազգային Ժողովը ստեղծած է երիտասարդական խորհրդարան, որուն կրնան մաս կազմել նաեւ Սփիւռքէն երիտասարդներ խորհրդարանի յաջորդ ընտրութիւններուն: «Մենք ոչ միայն պարտաւոր ենք, այլեւ պարտադրուած ենք միասնական լինել՝ յանուն հզօր Հայաստանի ու հզօր Սփիւռքի, յանուն նոր յաղթանակների, յանուն մեր ընդհանուր շահերի եւ նպատակների», շեշտեց ան:

Խօսքերէն ետք հանդիսութիւնը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով: Յաջորդեց հիւրասիրութիւն, որմէ ետք Պատգամաւորական Ժողովը անցաւ իր աշխատանքներուն:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controlled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Yerevan
32-38, Hanrabedoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europehotel.am

www.europehotel.am

Reservations

StudioVICKEN 2005 PARIS

Հ.Մ.Ը.Մ.Ի 10րդ ՊԱՏՊԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՊԱՄԸ՝ ՆՈՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԻՒՆ, ՆՈՐ ԴԻՄԱԳԻԾ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

- Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԿԱՌՈՅՑԻՆ ՀԶՕՐԱՑՈՒՄԸ, ՆՈՐ ՍՓԻՒՌԻ ՄԷՋ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒ ԾԱԽԱԼՈՒՄԸ ԵՒ ՀԱՄԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՈՐԴԵԳՐՈՒՄԸ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ: - ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՆԵՐԳՐԱՒՈՒՄԸ ԵՒ ՀԱՅԱԽՕՍՈՒԹԵԱՆ ԶԱՐԿ ՏՈՒՈՂ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՄՇԱԿՈՒՄԸ ԳԼԽԱՒՈՐ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ:

93ամեայ Հ.Մ.Ը.Մ.Ի պարմունքան մէջ կարևոր անկիւնաքարն էր թուական մը հանդիսացաւ 10 Մեպտեմբեր 2011ը, որ միութեան 10րդ Պարզամատրական Ընդհանուր Ժողովին աւարտը նշելէ աւելի սկիզբը նշեց միութեան վերանորոգման ու վերակազմակերպման այն երթին, որ չորս փարի առաջ, իբրև նախնական պայկերացում, ճամբայ ելաւ ռազմավարական ծրագրատրումի հետանկարով:

Չորս փարի ետք, ահա, Հ.Մ.Ը.Մ. իր առաջին հասարակ քայլը նկատեց յուսարու այդ երթին ճամբուն վրայ, մշակելով ռազմավարական երկարաշունչ ծրագիր մը, որ բոլոր նախադրեալները ունի բաւարարելու մեր ընկերութեան ու յարկապէս հայ իրականութեան նորագոյն պահանջները:

Երկրասարդութիւն եւ արհեստագիտութիւն խլեցին Պարզամատրական Ժողովի քննարկումներուն մեծագոյն մասը: Կազմակերպական հզօրացման մարտահրաւէրը, իր կարգին, սեղանի վրայ ներկայացաւ հրապարակ անհրաժեշտութեամբ: Կարարութեան փոքրիկ նախաձեռնումներ, եղան միտքերու փոխանակումներ, յաճախ մրայնութիւններու բախումներ, որոնք սակայն բոլորն ալ վերջապարտութեան յանգեցան այն հասարակ համոզումին, որ Հ.Մ.Ը.Մ. սկսեալ հասարակ եւ ծառայութեան դաշտերը ընդլայնելու համար, այսուհետեւ հարկ է ունենալ կազմակերպական աւելի ճկուն, արդիական եւ ժամանակակից կառոյցներ, երկրասարդական նորարար շունչով եւ յանձնառու դեկալարութեամբ:

10րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի նիստերը երկարեցան հինգ օրերու վրայ եւ ընդգրկեցին հայ ժողովուրդի ճակատագրին եւ հայ մարդու նկարագրին սպառնացող այժմէական բոլոր հարցերը: Երկրասարդութեան ներգրաւման ու պահպանման հարց, այլասերում-քաղքենիացում-ձուլում, հայախօսութեան եւ հայ դպրոցի նահանջ, սկստական եւ մարզական կեանքի բարելաւման առաջադրանքներ, ծնողներու եւ միջավայրի պատասխանատուութեան բաժին, արհեստագիտական նորագոյն միջոցներու օգտագործման կարելիութիւններ եւ այլն:

Նիստերը սկսան Երկուշաբթի, 5 Սեպտեմբերի երեկոյեան ժամը 5ին, Ծաղկաձորի «Մայլի Ռէսթ Հոտել» պանդոկի պաշտօնական հանդիսութեանէն ետք, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային եւ Մեկուսի 18 շրջաններէ 59 պատգամաւորներու եւ 35 հրաւիրեալներու, որոնք կարգին՝ Իրանի Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութեան (Հ.Մ.Ա.Կ.) ներկայացուցիչը:

«Յառաջ նահատակ» քայլերի խմբերգումէն ետք, ընթացաւ Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գրիգորի Պողարեան ներկաները հրաւիրեց մէկ վայրկեան յոտնկայս լուծեամբ յարգելու յիշատակը անցնող չորս տարիներուն յաւատարմութեամբ Հ.Մ.Ը.Մ.ականներուն: Ապա, ան յաջողութիւն մաղթեց Պատգամաւորական Ժողովի աշխատանքներուն եւ հրաւիրեց ժողովը կազմելու առժամեայ դիւանը:

Առաջարկուեցան եւ միաձայնութեամբ առժամեայ դիւանի անդամ ընտրուեցան եղբայր Մոսիկ Թօփուզեան (Գանատա)՝ ատենապետ եւ քոյր Սեւան Նազարեան (Հ.Մ.Ը.Մ.՝



Ընթացաւ Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գրիգորի Պողարեան կը կատարէ Պատգամաւորական Ժողովին բացումը:

Ֆրանս՝ քարտուղար: Յաջորդեց լիազօրագիրներու ստուգման յանձնարարութիւնը: Յառաջացաւ եռանդամ կազմ, որուն մաս կազմեցին եղբայրներ Վիգէն Գորթեան (Աւստրալիա), Բաֆֆի Վարժապետեան (Արեւմտեան Մ. Նահանգներ) եւ Հրաչ Մեսրոպեան (Արեւելեան Մ. Նահանգներ):

Ժողովին օրինականութիւնը հաստատող լիազօրագիրներու քննութեան լոյսին տակ պարզուեցաւ հետեւեալ պատկերը: -

Ժողովին իրաւասու ձայնով մասնակցելու իրաւունք ունէին՝

- 9 Շրջանային Վարչութիւններէ 45 պատգամաւորներ, որոնք կը ներկայացնէին իրենց շրջաններու 75 մասնաճիւղերը:
- 9 Մեկուսի Վարչութիւններէ 14 պատգամաւորներ, որոնք կը ներկայացնէին իրենց շրջաններու 15 մասնաճիւղերը:

Ընթացաւ Կեդրոնական Վարչութիւնը ներկայացուած էր լիազօր ներկայացուցիչով մը:

Պատգամաւորական Ժողովին կը մասնակցէին նաեւ ի պաշտօնէ եւ խորհրդակցական ձայնով հր-

րաւիրեալ 26 քոյր-եղբայրներ, ինչպէս նաեւ՝ ընթացաւ Կեդրոնական Վարչութեան 6 անդամներ (կամքէ անկախ պատճառներով կը բացակայէին եղբայրներ Գօգօ Պալեան եւ Հրաչ Սիսեռեան):

Այս հաստատումները կատարելէ եւ շրջաններու նիւթական պարտաւորութիւններուն փակուած ըլլալը ստուգելէ ետք, ժողովը նկատուեցաւ օրինաւոր եւ սկսաւ իր աշխատանքներուն:

Մնայուն դիւանի ընտրութեան օրակարգին, առժամեայ դիւանի կազմին վրայ աւելցան եղբայրներ Արմէն Աբրահամ-

եան (Արեւմտեան Մ. Նահանգներ)՝ ատենապետ, Բաֆֆի Վարժապետեան (Արեւմտեան Մ. Նահանգներ), Յակոբ Պարսումեան (Սուրիա) եւ քոյր Իրմա Ճէրէճեան (Լիբանան)՝ քարտուղարներ: Ապա, ընտրուեցան արխիւային, հաշուեքննիչ, բանաձեւի եւ քուէախոյզ յանձնարարներու անդամները:

Նիստը վերջ գտաւ երեկոյեան ժամը 9ին, Հ.Մ.Ա.Կ.ի ներկայացուցիչ Հրաչ Զարիֆեանի կողմէ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան յուշանուէրի մը փոխանցումով:



Հ.Մ.Ա.Կ.ի ներկայացուցիչը յուշանուէրով մը կը պատուէ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետը:

**ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ
Հ.Մ.Ը.Մ.Ի 102 ՄԱՍՆԱԳԻՒԳԵՐՈՒ**

Հ.Մ.Ը.Մ. - Հ.Ա.Ս.Կ.	Քաղաք	Հիմն.	Սկսուտ	Անդամ	Ընդհ.
			676	248	924
Երեւան	Երեւան	1989	195	120	315
Քասախ-դպրոց	Երեւան	2009	30	5	35
Թիւ 156 դպրոց	Երեւան	2009	27	2	29
Թիւ 51 դպրոց	Երեւան	2009	34	4	38
Թիւ 105 դպրոց	Երեւան	2009	44	5	49
Ա. Այվազեանի դպ.	Երեւան	2010	15	-	15
Աբովեան	Աբովեան	1990	60	20	80
Յ. Առուստամեան	Չարենցաւան	1990	50	19	69
Հրազդան	Հրազդան	1991	48	14	62
Վարդան Բախշեան	Արմաւիր	1992	58	22	80
Վաչէ	Էջմիածին	1993	48	12	60
Մարմաշէն	Մարմաշէն	2009	12	2	14
Վահան Չերազ	Գիւմրի	1990	35	14	49
Աշտարակ	Աշտարակ	2009	20	9	29

ԶԱՒԱՆՔ	Հիմն.	Սկսուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
Ախալքալաք	2001			Կազմալոյծ	
Ախալցխա	2001			Կազմալոյծ	

ՌՈՒՄԻԱ	Հիմն.	Սկսուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
Մոսկուա	2008			Կազմալոյծ	

ԼԻԲԱՆԱՆ	Հիմն.	Սկսուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		1063*	982**	1595	3640
Պէյրուսթ	1924	196	128	287	611
Չահլէ	1927	30	-	75	105
Թրիփոլի	1929	-	22	26	48
Պ. Համուտ	1935	225	138	237	600
Այնճար	1940	200	112	350	662
Ճիւնի	1950	30	40	130	200
Անթիլիաս	1970	175	184	420	779
ժըտէյտէ	1974	130	-	70	200
Պաուշրիէ	1998	-	58	-	58

* Ներառեալ՝ Սկ. Շրջ. խմբապետութիւն 7, Շրջանային շէփօրախումբ 40, Այնճարի շէփօրախումբ 30:
** Ներառեալ՝ ֆութպոլի ակադեմիա (Անթիլիաս) 100, ֆութպոլի ակադեմիա (Շրջանային) 200:

ՍՈՒՐԻԱ	Հիմն.	Սկսուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		1325	830	765	2920
Հալէպ	1925	600	525	400	1525
Դամասկոս	1925	220	85	125	430
Լաթաքիա	1926	150	60	80	290
Գամիշլի	1931	230	120	120	470
Քեսապ	1994	125	40	40	205

Թիւին լուսանկարները՝ ՍՈՆԱ ԱՄԱԳԵԱՆԻ




Երբայրներ Վարդան Գազանճեան եւ Ռաֆֆի Թիւպեան:

ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին երկրորդ օրը նիստերը սկսան առաւօտեան ժամը 9ին եւ, կարճատեւ դադարներով, շարունակուեցան մինչեւ երեկոյեան ժամը 6:30: Առաւօտեան բացման նիստին, Պատգամաւորական Ժողովի դիւանը գումար էր Հ.Մ.Ը.Մ.Ի հիմնադիր սերունդի անդամներէն Տիգրան Քհնյ. Խոյեանի կնոջ՝ Երէջկին Սիրարբի Խոյեանի մահը: Այս առիթով ընթերցուեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ցաւակցագիրը՝ Խոյեանի ընտանեկան պարագաներուն:

Ապա, ժողովը անցաւ ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան քառամեայ գործունէութեան (Սեպտեմբեր 2007-Սեպտեմբեր 2011) քննարկման:

Նիւթաբարոյական տեղեկագիրները նախապէս համացանցի կայք էջի ճամբով պատգամաւորներու տրամադրութեան տակ դրուած ըլլալով, ժողովականները անմիջապէս անցան լուսաբանական հարցումներու: Նիւթական տեղեկագիրի պարագային, փառուր-փոյնթով ներկայացուեցաւ ամբողջական եւ մանրամասն գեկուցում մը, ուր պարզուեցաւ թէ անցնող քառամեակի Կեդրոնական Վարչութեան գործառնութիւնը եղած է մէկ միլիոն տոլար (ընդհանուր մուտք՝ 1.062.535 տոլար, ընդհանուր ելք՝ 1.062.478 տոլար): Գլխաւոր մուտքերը եղած են նուիրատուութիւններով (181.000 տոլար), համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումներու (203.000 տոլար) եւ մարզախաղերու (462.000 տոլար) մասնակցութեան գումարներով: Իսկ գլխաւոր ելքերը կազմած են համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումներու (232.000 տոլար) եւ մարզախաղերու (452.000 տոլար) ծախսերը: Ապա, առիթ տրուեցաւ շրջան-





Եղբ. Պետիկ Տեր Վարդանեան:

ներու ներկայացուցիչներուն, որպէսզի ամփոփ կերպով ներկայացնեն իրենց շրջաններու գլխաւոր իրագործումները եւ դժուարութիւնները:

Տեղեկագիրներու քննարկումէն ի յայտ եկաւ, որ անցնող քառամեակին միութիւնը կազմակերպական իմաստով անցեալի յառաջընթացը չէ ունեցած: Մոսկուայի (2008), Լաւալի (2010) եւ Նորթ Հոլիվուտի «Ջալախք» մասնաճիւղերու (2011) հիմնադրութիւնները եղած են ողջունելի քայլեր, որոնց առընթեր սակայն Մեկուսի կարգ մը շրջաններ գտնուած են տեղքայլի ու ետքայլի մէջ: Հիմնական նորութիւններ արձանագրուած են Հայաստանի եւ Շուէտի մէջ, ուր որդեգրուած է միաւորներու դրութիւն: Սկստուական եւ մարզական խումբեր կազմած են առանձին միաւորներ, որոնք դործած են իրենց երկրի ՀՄԸՄ-ի վարչութիւններու կողքին, առանց մասնաճիւղերու վերածուելու: Այսպէս, Հայաստանի տարբեր շրջաններուն եւ դպրոցներուն մէջ ստեղծուած են 7 միաւորներ (Քասախ-դպրոց, թիւ 156 դպրոց, թիւ 51 դպրոց, թիւ 105 դպրոց, Աղասի Ալվազեանի անուան դպրոց, Մարմաշէն, Աշտարակ),



Եղբայրներ Յակոբ Ենիգոմշեան եւ Լեւոն Պէնկեան:

ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ
Հ.Մ.Ը.Մ.Ի 102 ՄԱՍՆԱՃԻՂԵՐՈՒ

Մ. ԱՐԵՒԵԼՔ	Հիմն.	Սկսուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
Աղեքսանդրիա*	1912	522	333	1208	2063
Գահիրէ*	1914	15	12	120	147
Գահիրէ*	1914	63	29	210	302
Երուսաղէմ	1935	74	70	139	283
Հայֆա	1937	-	15	30	45
Եաֆա	1937	-	12	28	40
Ամման	1937	80	-	221	301
Քուէթ	1983	190	51	195	436
Պաղատա**	1949	100	144	265	509
Մուսուլ **	1960		Կազմալոյծ		

* Աղեքսանդրիոյ «Կամք»ը եւ Գահիրէի «Արարատ»ը Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին միացած 1974ին:

** 35 տարուան ընդմիջումէ ետք Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին միացած 2003ին:

ԿԻՊՐՈՍ*	Հիմն.	Սկսուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
Նիկոսիա	1927	-	40	95	135

* 2003ին վերամիացած Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին:

ՅՈՒՆԱՍՏԱՆ	Հիմն.	Սկսուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
Աթէնք	1924	200	144	295	639
Գոքինիա	1924	95	82	120	297
Գոքինիա	1924	105	62	95	262
Սելանիկ	1928	-	-	80	80

ԵՒՐՈՊԱ	Հիմն.	Սկսուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		181	59	286	526
Լոնտոն	1979	121	23	120	264
Միլանո	1983			Կազմալոյծ	
Վիեննա	1985	3	-	34	37
Ալմէլօ	1996	57	36	132	225
Պուտափէշք	2005			Կազմալոյծ	

ՖՐԱՆՍԱ	Հիմն.	Սկսուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		56	438	163	657
Փարիզ	1977	56	48	63	167
Վալանս	1983	-	40	50	90
Մարսէյ- «Արօի»*	1924	-	350	50	400

* 2007ին վերամիացած Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին:

որոնք իրենց շուրջ համախմբած են 162 նոր ՀՄԸՄ-ականներ: Շուէտի մէջ, Սթոքհոլմի մասնաճիւղին կողքին գործած են երեք միաւորներ (Ստոերթելիէ, Վեսթերոս, Խոփտէ)՝ 343 անդամներով, 40 սկսուտ, 53 մարզիկ եւ 250 անդամ:

Թուական կազմի իմաստով, անցնող չորս տարիներուն ՀՄԸՄ- ունեցած է շուրջ 1232 անդամի կորուստ (նախորդ քառամեակի ընդհանուր թիւին 4.74 առ հարիւրի նուազում):

**ԱՆԴԱՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ
Հ.Մ.Ը.Մ.Ի 102 ՄԱՍՆԱԾԻՂԵՐՈՒ**

ՊՈՒԼԿԱՐԻԱ	Հիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		165		80	245
Սոֆիա	1991	38	-	20	58
Ռուստ	1991	33	-	15	48
Փլովտիվ	1992	10	-	20	30
Վանոնա	1992	40	-	15	55
Շումեյն	1997	15	-	-	15
Պուրկաս	1999	29	-	10	39
Տոպրիչ	1999		Կազմալոյծ		

ԳԱՆԱՏԱ	Հիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		683	613	416	1712
Մոնթրեալ	1958	370	225	211	806
Համիլթոն	1968	-	23	5	28
Թորոնթո	1969	261	211	122	594
Քեմպրիժ	1977	52	89	30	171
Սենթ Գաթրիճգ	1986	-	20	5	25
Լաւալ	2010	-	45	43	88

ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. Ն.	Հիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		469	365	319	1153
Ուաշինգթոն	1971	51	77	40	168
Պոսթըրն	1973	195	65	57	317
Նիւ Եորք	1975	-	38	17	55
Նիւ Գրոզի	1975	47	20	38	105
Շիքսկո	1975	38	10	32	80
Ֆիլադելֆիա	1975	35	30	25	90
Տիքսոն	1976	42	85	45	172
Փրովիտոն	1981	35	10	25	70
Ֆլորիտա	1981	20	25	25	70
Ալպրնի	1986	6	5	15	26

Հ. ԱՄԵՐԻԿԱ	Հիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		268	336	752	1356
Պուլեյնո Այրես	1927	105	205	660	970
Գորտոպա	1929	99	20	50	169
Մոնթվիդեո	1987	64	111	42	217

Սեպտեմբեր 2011ի տուեալներով, Հ.Մ.Ը.Մ. կը հաշուէ 7101 սկառուտ, 9753 մարզիկ, 7914 անդամ, ընդամէնը 24768 Հ.Մ.Ը.Մ.ական: 2007ի ընդհանուր թիւին բաղդատած (26000 անդամ)՝ կորուստները եղած են հետեւեալ ձեւով.- 278 մարզիկ, 412 սկառուտ, 542 անդամ: Անդամական թիւի մեծագոյն կորուստները ունեցած են Սուրիոյ (1431 անդամ նուազ, ընդհանուր թիւին 32.8 առ հարիւր) եւ Արեւմտեան Մ. Նահանգներ (1124 անդամ նուազ, ընդհանուր թիւին 12.8 առ հարիւր): Փոխարէնը, անդամական թիւի զգալի աճ ունեցած են Շուէտի (305 անդամ, ընդհանուր թիւին 47.6 առ հարիւր համեմատութեամբ) եւ Լիբանանի շրջանները (695 անդամ, ընդ-



հանուր թիւին 19.9 առ հարիւր համեմատութեամբ): Ուշագրաւ եղած է Հ.Մ.Ը.Մ.-ի անդամական թիւին աճը (17.5 առ հարիւր)՝ 41 սկառուտ եւ 121 անդամ: Ողջունելի յաջողութիւն արձանագրած է նաեւ Յունաստանի շրջանը՝ 80 սկառուտներու եւ 119 նոր անդամներու յաւելումով (Շրջաններու անդամական ընդհանուր պատկերները տեսնել առանձին տախտակներով):

Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան իններորդ Կեդրոնական Վարչութիւնը 2007-2011 երկարող իր գործունէութեան շրջանին ունեցած է բեղուն գործունէութիւն.-

● Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական Ե. համագումար (Մադկաձոր, 24-29 Օգոստոս 2008):

● Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակին առիթով, «Շաւարշ Քրիսեան» յարանի բացում եւ գիտաժողով Հայաստանի պետական համալսարանի մարմնակրթութեան հիմնարկին մէջ (Երեւան, 6 Սեպտեմբեր 2008):

● Միջ-վարչական դիւանական է. խորհրդաժողով (Փարիզ, 9-11 Ապրիլ 2009):



Եղբ. Գառնիկ Աբրահամեան:



Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի պատգամաւորները:

● Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Թ. բանակում (Բիւրական, 31 Յուլիս-8 Օգոստոս 2010):

● Քոյր մասնաճիւղերու Ա. բանակում (Բիւրական, 8-13 Յուլիս 2011):

● «Հայկ Յովսէփեան» բանակավայրի բացում (Երեւան, 11 Յուլիս 2011):

● «Մարզիկ» պաշտօնաթերթի 42 թիւերու եւ Հ.Մ.Ը.Մ.ի ընդհանուր կանոնագրութեան հրատարակութիւն:

● Ռազմավարական ծրագրաւորումի թղթածրարի պատրաստութիւն անգլերէն եւ հայերէն տարբերակներով (157 էջ, 9 գլուխ, 19 ենթաբաժին):

Տեղեկադիրներու քննութեան եւ լուսաբանական հարցում-պատասխաններէն ետք, յետմիջօրէի նիստերը յատկացեցան ժողովականներու ըստ էութեան արտապայտութիւններուն եւ Կեդրոնական Վարչութեան խօսքին:

Երեկոյեան, երրորդ նիստի փակումէն առաջ, հրաւիրուեցաւ ժողովի երիցագոյն անդամ եղբ. Լեւոն Փալեանը, որպէս-



Եղբայրներ Պողոս Պետրոսեան եւ Օհան Օհանեւեան:

**ԱՆԴԱՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ
Հ.Մ.Ը.Մ.Ի 102 ՄԱՍՆԱԾԻՂԵՐՈՒ**

ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ. Ն.	Հիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		1333	5228	1092	7653
Լոս Անճելըս	1968	110	545	77	732
Սան Ֆրանսիսքո	1970	55	235	25	315
Ֆրեզնո	1971	66	198	62	326
Մոնթեպելլո	1974	28	143	23	194
Փասատինա	1977	100	429	70	599
Կլենտլը	1978	476	1190	340	2006
Օրէնճ Քաունթի	1979	26	226	46	298
Սան Ֆեռնանտո	1979	94	805	65	964
Սան Տիէկո	1983	-	85	21	106
Ինլընտ Էմփայր	1990	65	105	62	232
Սանթա Գարա	1991	75	259	61	395
Սոլթ Լէյք Սիթի	1991		Կազմալոյծ		
Սաութ Պէյ	1992	14	39	25	78
Քրետնթա հովիտ	1993	45	488	39	572
Պրոպէնք	1995	109	306	92	507
Լաս Վեկաս	1997	26	77	28	131
Ֆինիքս	1998	23	53	19	95
Ուոլնաթ Քրիք	1999	20	35	32	87
Քոլորադո	2002		Կազմալոյծ		
Նորթ Յոլիվուտ	2011	1	10	5	16


ԱՄՍՐԱԿԱՆ	Հիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		160	385	600	1145
Սիտնի «Անդրանիկ»	1965	60	200	251	511
Մեյպուրն «Արաքս»	1966	-	60	63	123
Սիտնի «Նաւասարդ»	1973	40	65	124	229
Սիտնի «Կամք»	1981	-	-	15	15
Սիտնի «Արարատ»	1989	60	60	147	267

զի իր սրտի խօսքը փոխանցէ ներկաներուն: Զեմեայ եղբ. Փայեան յաջողութիւն մաղթեց Պատգամաւորական Ժողովի աշխատանքներուն, ցանկալով որ 78 տարուան միութենական կեանքէ ետք, Աստուած ուժ եւ կարողութիւն տայ՝ շարունակելու իր ծառայութիւնը սիրելի միութեան եւ ժողովուրդին:



Եղբայրներ Վիգէն Ասագեան, Շահէ Ենիգոյնեան եւ Մանուէլ Մարտիեան:

Չորեքշաբթի, առաւօտեան առաջին նիստին, ժողովը լսեց հաշուապահական երդուեալ գրասենեակի մը զեկուցումը՝ Կեդրոնական Վարչութեան քառամեայ նիւթական գործառնութեան մասին, որ կը հաստատէր հաշիւներուն ճշգրիտ եւ կանոնաւոր ըլլալը: Ընթերցուեցաւ նաեւ ժողովէն առաջ, Պէյրութի մէջ պատգամաւոր եղբայրներէ կազմուած արխիւային յանձնախումբին զեկուցումը՝ Կեդրոնական Վարչութեան արխիւներուն մասին: Ապա, ժողովին հաշուեքննիչ եւ արխիւային յանձնա-



Եղբ. Շահէ ԵՆԻՊՈՆՉԵԱՆ աշխատանքի պահուն:

խումբերը ներկայացուցին իրենց բանաձեւերը, որոնց յոյսին տակ բանաձեւի յանձնախումբը ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան գործունէութիւնը արժեւորեց «ԳՆԱՀԱՏԵԼԻ» բնորոշումով:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԱԻՈՐՈՒՄԻ ԹՂԹԱԾՐԱՐԸ

10րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը իր նախորդներէն յատկանշուեցաւ նոր օրա-

կարգի մը քննութեամբ: Անունը՝ ռազմավարական ծրագրաւորում, նպատակը՝ ո՞ր եւ ի՞նչպէս պատկերացնել Հ.Մ.Ը.Մ.ը ասկէ 10-15 տարի ետք:

«Իբրեւ սփիւռքեան մեծ կազմակերպութիւն, Հ.Մ.Ը.Մ. այսօր ունի աւելի մեծ պատասխանատուութիւն, - կը հաստատէ ծրագրաւորումին ներածական բաժինը, - իբրեւ այդպիսին, անկա մեզ կը պարտաւորեցնէ ապագային ծրագրումը կատարել շատ խորութեամբ եւ հոգածութեամբ: Մենք կը յուսանք, որ ռազմավարական այս ծրագիրը սկիզբ մը կ'ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ը աւելի առոյգ եւ հետեւողական ծրագրումի արժանացնելու: Մենք կը յուսանք, որ այս ծրագիրը կարելիութիւնը կ'ընձեռէ Հ.Մ.Ը.Մ.ին, իբրեւ համաշխարհային երիտասարդական կազմակերպութիւն, ներգործօն եւ հետեւողական կերպով նետելու ապագայի իր հաստատ քայլերը: ...Հ.Մ.Ը.Մ.ը փայլուն ապագայ ունի իր առջեւ: Մեր երկրորդ հարիւրամեակի այգաբացին, մենք կը հաւատանք, որ այս ծրագիրը պիտի օգնէ մեզի աւելի բարձրորակ ծառայութիւն մատուցելու մեր երիտասարդութեան եւ գաղութներուն»:

Տեղին է նշել, որ նախորդ Պատգամաւորական Ժողովին որոշումով, այս աշխատանքին համար կազմուեցաւ յատուկ




ԶԳԱԼԻ ՅԱՌԱՋԸՆԹԱՑ

Պատգամաւորական 10րդ Ընդհանուր Ժողովը իր կազմին մէջ ունեցաւ 15 քոյր պատգամաւորներ, որոնք կազմեցին պատգամաւորներու ընդհանուր թիւին (92) 16.30 առ հարիւրը:

Ներկայացուցչական իմաստով, Լիբանան ունեցաւ քոյր պատգամաւորներու մեծագոյն թիւը՝ երեք լիազօր քոյրեր, երկու քոյրով ներկայացաւ Արեւելեան Մ. Նահանգներու շրջանը, իսկ մէկական քոյրերով՝ Գանատայի, Հայաստանի, Հարաւային Ամերիկայի, Յունաստանի, Պուկարիոյ եւ Փարիզի շրջանները: Հրաւիրեալներու շարքին էին չորս քոյրեր՝ երկուքը Արեւմտեան Մ. Նահանգներէն, երկուքն ալ՝ «Մարգիկ»ի յանձնախումբին եւ Կեդրոնական Վարչութեան գործավարութեան կողմէ:

Նախորդ Պատգամաւորական Ժողովին ներկայ էին 6 քոյրեր միայն, որոնք կը կազմէին պատգամաւորներու ընդհանուր թիւին 5.40 առ հարիւրը:



Եղբայրներ Յակոբ ԵՆԻՊՈՆՉԵԱՆ եւ Լեւոն ՊԷՆԿԵԱՆ:

յանձնախումբ մը, բաղկացած եօթը եղբայրներէ.- Արմէն Աբրահամեան, տոքթ. Շահէ Ենիգոմշեան, Վիգէն Դաւթեան, դոկտ. Ռազմիկ Շիրինեան (Մ. Նահանգներ), Գէորգ Մանկելեան (Գանատա), Արամ Սիսեռեան (Ֆրանսա) եւ Արտո Աճէմեան (Լիբանան): Յանձնախումբին մօտ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան ներկայացուցչութիւնը վարեց փոխ ատենապետ եղբ. Գօգօ Պալեան:

Յանձնախումբը իր թղթածրարին պատրաստութեան համար կատարեց յատուկ համագումար, իր տրամադրութեան տակ ունեցաւ 55 մասնաճիւղերու յղուած հարցարաններու պատասխաններ, կատարեց PEST, SWOT եւ Visions հարցարաններու ամբողջացումներ՝ անցեալի եւ ներկայի միութենական պատասխանատուներու կողմէ եւ կազմակերպեց երիտասարդական հեռահաղորդակցութեան երկու տեսահամագումարներ (on line youth video teleconferences), արծարծելով հիմնական հետեւեալ կէտերը.-

- Միութեան ներկայ վիճակը:
- Արտաքին փոփոխութիւններու անդրադարձը միութեան վրայ:
- Միութեան սպառնացող ներկայ եւ ապագայ մարտահրաւէրներն ու զարգացումները:
- Միութեան յառաջիկայ 10-15 տարիներու գործունէութեան պատկերացումը:
- Ռազմավարական գլխաւոր նպատակներու եւ առաջադրանքներու յստակացումը:

Այս բոլորին եզրակացութիւնը կազմեց այն թղթածրարը, որ 10րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովէն երկու ամիս առաջ դրուեցաւ միութեան բոլոր շրջաններու տրամադրութեան տակ՝ առ քննարկում:

Թղթածրարը ունեցաւ իր բնաբանը՝ «Նպատակ առանց ծրագրի պարզապէս ցանկութիւն է»: Գլուխները եւ ենթաբաժինները ունեցան հետեւեալ պատկերը.-

Ա. Ամփոփում

Բ. Ներածական

1. Ռազմավարական ծրագրաւորումի յանձնախումբին խօսքը



Քոյրեր Պեթրիս Ծառուկեան, Վերա Տէր Պողոսեան եւ եղբ. Վիգէն Արէլեան:


2. Ռազմավարական ծրագրաւորում
 ա. Ծրագրաւորումին հանգրուանները
 բ. Ռազմավարական ծրագրաւորումի յանձնախումբին անդամները

Գ. Ռազմավարական ծրագրաւորումի անհրաժեշտութիւնը

1. Ինքնարժեւորում
2. Ընկերա-քաղաքական գործօններ
3. Գործառուլթային-կատարողական գործօններ

Դ. Հ.Մ.Ը.Մ.ը այսօր. Ի՞նչ է ներկայ կացութիւնը

1. Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը
2. Հ.Մ.Ը.Մ.ի վարչական-կազմակերպչական կառոյց եւ անդամական վիճակ
3. Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնը



Հ.Մ.Ը.Մ.Ի ԹԱՆԳԱՐԱՆԸ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՐԿԱՅ

Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի կեդրոնատեղիին մէջ գտնուող «Վարդգէս Տէր Կարապետեան» թանգարանը 10րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին կողմէ արժանացաւ յատուկ ուշադրութեան: Թանգարանի յանձնախումբի պատասխանատու եղբ. Բիւզանդ Թորիկեան ժողովին ներկայացուց լայն զեկուցում մը թանգարանին 25ամեայ պատմութեան եւ բովանդակութեան մասին, ապա ան ներկաներուն բաժնեց թանգարանին բովանդակութիւնը ներկայացնող գրքոյկներու նմոյշներ, որոնք հրատարակութեան պիտի արժանանան շուտով:

Նորագոյն տուեալներով, Հ.Մ.Ը.Մ.ի թանգարանային իրերուն թիւը անցած է 1000ը: Բոլորը թուագրուած եւ համապատասխան բացատրութիւններով ցանկագրուած են եղբայրներ Բիւզանդ Թորիկեանի եւ Բաֆֆի Եսայեանի կողմէ: Այժմ անոնք կը լուսանկարուին՝ յատուկ հրատարակութեամբ մը հանրութեան ներկայացուելու համար:

ՄՏԱՀՈԳԻՉ ԹԻՒՆԵՐ

Պատգամաւորական ժողովին ներկայացուած Հ.Մ.Ը.Մ.ի ռազմավարական ծրագիրը ընդգրկեց ինքնարժեւորման բաժին մը, որ վիճակագրական տուեալներով լուսարձակի տակ առաւ հայութեան ընկերաքաղաքական ներկայ պայմանները:

Տուեալները երեւան հանեցին նոր սերունդի հայեցի դաստիարակութեան կապուած մտահոգիչ թիւեր: Այսպէս, այսօր Սփիւքի մէջ՝

- Հայկական վարժարան յաճախող հայ աշակերտութեան թիւը կը կազմէ աշակերտութեան ընդհանուր թիւին 5 առ հարիւրը:

- Հայ կեանքին իրենց մասնակցութիւնը կը բերեն հայ երիտասարդներու 2-3 առ հարիւրը:

- Հայկական կազմակերպութիւններու հետ կապ ունին հայերու 10 առ հարիւրը:

- Հայկական վարժարաններ կը յաճախեն Հ.Մ.-Ը.Մ.ականներու 60 առ հարիւրը:

Վիճակագրական տուեալները անդրադարձան նաեւ հայութեան տեղաբաշխումի ներկայ պատկերին, նշելով որ այսօր՝

- Հայութեան մեծագոյն հատուածը (41.74%) կ'ապրի ազգային կեանքի ամենէն անկազմակերպ պատկերը ներկայացնող Ռուսիոյ եւ նախկին Խ. Միութեան երկիրներու մէջ՝ 3.500.000, որուն 2.300.000 Ռուսիոյ մէջ, 300.000 Ուրբանիոյ մէջ, 250.000 Վրաստանի մէջ, իսկ 650.000 նախկին Խ. Միութեան այլ երկիրներուն մէջ:

- Հայութեան մէկ երրորդը (29.81%) կ'ապրի իր բնօրրանին՝ Հայաստան-Արցախ-Չաւախք եռանկիւնին մէջ՝ Հայաստան 2.250.000 բնակչութեամբ, Արցախ՝ 120.000, իսկ Չաւախք՝ 130.000:

- Արեւմտեան Սփիւքը կը ներկայանայ 2.000.000ով (23.85%) : Մ. Նահանգներ եւ Գանատա՝ 1.000.000, Եւրոպա 800.000, Հարաւային Ամերիկա 160.000, Աւստրալիա 40.000:

- Միջին Արեւելեան երբեմնի ստուար գաղութները այսօր կը ներկայանան 335.000ով (3.99%): Լիբանան՝ 110.000, Սուրիա 80.000, Իրան 80.000, այլ երկիրներ 65.000:

- Թուրքիոյ հայութիւնը կը ներկայացնէ 50.000 (0.59%):

4. SWOT-ԶՏԱՍ (Զօրութիւններ, տկարութիւններ, առիթներ, սպառնալիքներ)

5. Վիճակագրական եւ վերլուծական տախտակներ

Ե. Ռազմավարական ծրագրաւորումին բնութագիրը - Ապագայ Զ.Մ.Ը.Մ.ը - Ո՞ր կ'ուզենք հասնիլ

1. Վերամշակուած - բանաձեւուած առաքելութիւն

2. Անհատական, ազգային եւ միութենական հիմնական արժէքներ



Եղբայրներ Վիգէն Քորթեան, Պետիկ Տէր Վարդանեան եւ Արմաճիւթ Թորգոմեան:

3. Տեսլական - Հ.Մ.Ը.Մ. 2020

4. Ռազմավարական հարցեր - նպատակներ/առաջադրանքներ

2. Ռազմավարական ծրագրաւորումի գործադրութիւն - ի՞նչ պէտք է ընել

1. Ծրագրի սեփականութիւն

2. Կեդրոնական Վարչութիւնն ու իր գործադիր յանձնախումբերը

ա) Ռազմավարական ծրագրաւորումի գործադիր յանձնախումբ

բ) Ռազմավարական ծրագրաւորումի վերահսկիչ յանձնախումբ

3. Տարեկան պիւտճէ ռազմավարական ծրագրաւորումի գործադրութեան համար

Ե. Ծրագրի վերահսկում

1. Ծրագրի վերահսկում

2. Գործադրութեան չափի ճշգրտում - գործադրութեան բանալի ցուցանիշներ

Ը. Եզրակացութիւն - ապագայի վերաբերեալ միտքեր

Թ. Երախտիք

10րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը ռազմավարական ծրագրաւորումով զբաղեցաւ մէկուկէս օր, հինգ նիստերու ընթացքին առաւելաբար քննարկումի նիւթ դարձրնելով թղթածրարին Ե. գլուխին («Ապագայ Հ.Մ.Ը.Մ.ը - Ո՞ր կ'ուզենք հասնիլ») ռազմավարական 11 հարցերը, որոնց մեծամասնութեան շուրջ գոյացաւ համախոհութիւն: Կատարուեցան նաեւ թելադրանքներ կարգ մը կէտերու որդեգրումը յետաձգելու՝ առիթ տալու համար յաւելեալ քննարկման եւ միտքերու բիւրեղացման (օրինակ՝ միութեան նպատակին եւ կազմակերպական կառոյցին բարեփոխման վերաբերող առաջարկներու պարագային):

Կարգ մը յստակացումներէ եւ սրբագրութիւններէ ետք, ռազմավարական ծրագրաւորումի թղթածրարի ոգին եւ պա-

**Եղբայրներ Արմեն Կետիկեան
եւ Վահրամ Դանիելեան:**



րունակութիւնը իւրացուեցաւ եւ յանձնարարուեցաւ փոխանցել նորընտիր Կեդրոնական Վարչութեան՝ առ ի նպատակայարմար գործադրութիւն:

Այս առիթով ժողովը հաստատեց, որ ռազմավարական ծրագրաւորումի թղթածրարի Ե. գլուխին բոլոր հարցերը կը կարօտին գործադրութեան յաւելեալ ծրագիրներու (action plan), ուսումնասիրութեան եւ, հետեւաբար, պարտք դրուեցաւ յաջորդ Կեդրոնական Վարչութեան՝ հետապնդելու այս աշխատանքը ռազմավարական ծրագրաւորումի եւ ի հարկին թեքնիք այլ յանձնախումբերու միջոցով:

Ստորեւ՝ քննարկուած ռազմավարական 11 հարցերը.-

Հարց թիւ 1. Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան եւ հիմնական արժէքներու յստակացում (3 առաջադրանք, 5 նպատակակէտ):

Հարց թիւ 2. Ազդու եւ ճկուն կազմակերպական կառոյց (4 առաջադրանք, 5 նպատակակէտ):

Հարց թիւ 3. Յանձնառու ղեկավարութիւն (5 առաջադրանք, 9 նպատակակէտ):

Հարց թիւ 4. Առողջ եւ թափանցիկ տնտեսական գործառնութիւն (5 առաջադրանք, 5 նպատակակէտ):

Հարց թիւ 5. Առնչակից եւ ազդեցիկ ծրագիրներ (6 առաջադրանք, 5 նպատակակէտ):


Հարց թիւ 6. Անդամակցութեան թիւի աճ եւ անդամներու պահպանման ընթացքի բարելաւում (6 առաջադրանք, 9 նպատակակէտ):

Հարց թիւ 7. Հասանելութիւն. Հ.Մ.Ը.Մ.ի իսկական դէմքին ծանուցումը ներքին եւ արտաքին ճակատներու վրայ (7 առաջադրանք, 7 նպատակակէտ):

Հարց թիւ 8. Համա-

ԵՐԻՑԱԳՈՅՆԸ

10րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը ունեցաւ Պատգամաւորական Ժողովներու պատմութեան երիցագոյն պատգամաւորը՝ 91 տարեկան եղբ. Լեւոն Փալեանը, Հ.Մ.Ը.Մ.ի Ուաշինկթընի մասնաճիւղին:



Եղբ. Փալեան Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու շրջանին կողմէ հրաւիրեալ էր ժողովին եւ նիստերէն մէկուն աւարտին իր սրտի խօսքը փոխանցեց ներկաներուն:

«Կարելոր չէ որ 91 տարեկան եմ, կարելորը այն է՝ որ 1933 թուականէն Հ.Մ.Ը.Մ.ական եմ, իսկ 1945-1952 տարիներուն Թեհրանի մէջ եղած եմ Հ.Մ.Ա.Կ.ի անդամ: 78 տարուան միութենական կեանքս լեցուն է փորձառութիւններով: Աստուած ուժ եւ կարողութիւն տալ, որպէսզի շարունակեմ ծառայել սիրելի միութեանս եւ ժողովուրդիս», յայտնեց ան:

կազմակերպական արհեստագիտութիւն (4 առաջադրանք, 6 նպատակակէտ):

Հարց թիւ 9. Երիտասարդութեան խրախուսանք (5 նպատակակէտ):

Հարց թիւ 10. Հայերէն լեզուի գործածութիւնը առաւելագոյն մակարդակի հասցնել (4 առաջադրանք, 4 նպատակակէտ):

Հարց 11. Ինքնաբաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. մը եւ աւելի լայն յանձնառութիւն Հայաստանի եւ Արցախի նկատմամբ (11 առաջադրանք, 11 նպատակակէտ):

**Եղբայրներ Բիւզանդ Թորիկեան
եւ Գառնիկ Մկրտիչեան:**



ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒՄ ԹԷ ՀԱՅԱԿԵՐՏՈՒՄ...

Պատգամաւորական բոլոր Ընդհանուր Ժողովներու նման, այս ժողովին եւս շատ խօսուեցաւ հայապահպանման պայքարին մէջ Հ.Մ.Բ.Մ.ին ունենալիք դերակատարութեան մասին: Ներկայացուեցան բազմաթիւ առաջարկներ, տեսակետներ եւ պատկերացումներ, բոլորն ալ մղուած նոր սերունդը փրկելու ազգային մտահոգութեան:

Ուշագրաւ նորութիւնը եկաւ Հարաւային Ամերիկայի շրջանէն, որ հայապահպանման փոխարէն առաջարկեց *հայակերպում* տարազը: «Հայապահպանման պայքարին մէջ մենք պարտուած ենք,- յայտարարեցին շրջանի պատգամաւորները,- այլեւս պէտք է մտածենք հայակերտման մասին»:

Առաջարկը շատերուն տարօրինակ թուելով, կարիք ունէր բացատրութեան: Բացատրողները նշեցին. «Տեղական պայմաններու բերումով, խառն ամուսնութիւնները անհակալէռելի դարձած են այլեւս: Հայախօսութիւնը գրեթէ անկարելի է: Գարոցները մեծ նահանջի մէջ են: Կայ երեւոյթ մը, սակայն, որ կրնայ յուսատու ըլլալ: Այսօր մեծ թիւով օտար աշակերտներ կը յաճախեն հայկական վարժարաններ, կը գօրակցին Հայ Գատին, իրենք զիրենք առնչուած կը զգան մարդկային անիրատւութեան մը հատուցման խնդիրն եւ... մաս կը կազմեն Հ.Մ.Բ.Մ.ի շարքերուն: Կը մասնակցին համա-Հ.Մ.Բ.Մ.ական բանակումներու, մարզախաղերու: Հայաստան կ'այցելեն եւ իրենք զիրենք կը զգան մեզի պէս: Այս բոլորէն ետք, ինչո՞ւ հայեր չկերտել անոնցմէ...»:

Շարունակելով, բացատրութիւնը ներկայացնողները իրենց խօսքը այլ շրջաններու ներկայացուցիչներուն ուղղելով հաստատեցին. «Մենք ձեր վիճակը կը հասկընանք: Մենք ձեր քաշած ցարը 20-30 տարի առաջ քաշեցինք: Գարոց փակեցինք: Հայերէն խօսողները կորսընցուցինք, խառն ամուսնութիւններու սկսանք: Հիմա կարգը ձերն է: Սփիւռքեան դառն իրականութիւնն է այս: Վաղը դուք ալ մեր կացութեան պիտի մատնուիք եւ այն ատեն պիտի անդրադառնաք, որ տեղի տուած էք հայապահպանման պայքարին դիմաց եւ դէմ յանդիման կը գտնուիք նոր իրականութեան մը՝ հայակերտման պահանջին»...

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐՆ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Հինգշաբթի, 8 Սեպտեմբերին, Պատգամաւորական Ժողովը ընթացաւ աշխատանքային նիստերու զրուցեմամբ: Աշխատանքային եօթը յանձնախումբեր՝ մարզական, սկստական, կազմակերպական, «Մարզիկ» պաշտօնաթերթի, կայքէջի, տնտեսական եւ կանոնադրային բարեփոխումներու, առանձին հանդիպումներով քննութեան ենթարկեցին իրենց



Պատգամաւորական Ժողովի դիւանի անդամներ:



վստահուած օրակարգի կէտերը եւ շրջաններու բանաձեւերու հիմամբ պատրաստեցին որոշումի կարգ անցնելիք առաջարկները: Նոյն օրը երեկոյեան եւ յաջորդ օրը գումարուած նիստերուն որդեգրուելէ ետք՝ այդ առաջարկները դարձան Հ.Մ.Բ.Մ.ի յառաջիկայ քառամեակի գործունէութեան գլխաւոր սկզբունքները:

Յանձնախումբերուն կողմէ ներկայացուած եւ Պատգամաւորական Ժողովին կողմէ որդեգրուած հիմնական որոշումներուն այստեղ կ'արժէ անդրադառնալ ընդհանուր զիծերով:

ՄԱՐԶԱԿԱՆ

- Կազմակերպել Հ.Մ.Բ.Մ.ի ցամաքամասային մարզական մրցումներ, որոնք չխաչաձեւեն համա-Հ.Մ.Բ.Մ.ական մարզախաղերը կամ բանակումները եւ ներառեն 16 տարիքի պատանիները:

- Նկատի ունենալով Հարաւային Ամերիկայի մէջ կատարուած մինի-մարաթոնին մեծ յաջողութիւնն ու արձագանքը եւ



Եղբ. Սիիրան Շիմշիրեան:

համար հետապնդած նպատակը՝ Հայ Դատը ծանօթացնել օտարներու, միութեան բոլոր շրջաններուն թեւադրել Հայկական Յեղասպանութեան 100ամեակին առիթով նմանօրինակ մինի-մարաթոններ կազմակերպել նախընտրաբար նոյն ամսուան նոյն շաբաթավերջին, բոլոր շրջաններու մէջ:

- Կեդրոնական վարչութիւնը կեանքի կոչէ յանձնախումբ մը, որուն պարտականութիւնը ըլլայ վերամշակել համա-Հ.Մ.Բ.Մ.ական մարզախաղերու կանոնագիրը:

- Առաջին փորձէն քաջախելու եւ Հ.Մ.Բ.Մ.ական մարզիկ-մարզիկուհիներու մօտ ազգային գիտակցութիւնն ու հայրենասիրութիւնը առաւել արմատաւորելու համար,

համա-Հ.Մ.Բ.Մ.ական յաջորդ մարզախաղերը եւս կազմակերպել Հայաստանի մէջ:
- Համա-Հ.Մ.Բ.Մ.ական մարզախաղերուն մէջ ներառնել թենիսը:
- Իւրաքանչիւր երկրի ախոյեանական մրցումներու մասնակցող Հ.Մ.Բ.Մ.ական խումբերու մարզական վերնաշապիկները ըստ կարելիութեան դարձնել միատեսակ:
- Համահայկական խաղերուն մասնակցող գոտ Հ.Մ.Բ.Մ.ական խումբերը, որոնք կը ներկայացնեն տարբեր քաղաքներ, ըստ կարելիութեան իրաւունք ունենան կրելու Հ.Մ.Բ.Մ. անունը, որպէս հովանաւոր:

- Նկատի ունենալով համա-Հ.Մ.Բ.Մ.ական մարզախաղերուն եւ բանակումին միջեւ գոյութիւն ունեցող մէկ տարուան հեռաւորութիւնը միայն, համա-Հ.Մ.Բ.Մ.ական յաջորդ մարզախաղերը բացառաբար կազմակերպել 2012 թուականին (նախորդէն երեք տարի ետք)՝ չձանրաբեռնելու համար Հ.Մ.Բ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութիւնը եւ շրջաններու աշխատանքները: Այնուհետեւ մարզախաղերը կը կատարուին չորս



Եղբ. Ստեփան Տէր Պետրոսեան:



«ՇՇՄԵՑՈՒՑԻՆ ԺՈՂՈՎԸ...»

Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի յաջորդական նիստերուն, խօսքի արտօնութիւն խնդրող Վիզէներուն թիւը մեծաթիւ էր, ինչ որ յաճախ տեղի կու տար շփոթի եւ շուարումի: Ներկայ էին եօթը Վիզէներ, որոնց ի տես՝ պատգամաւոր մը չվարանցաւ յայտարարելու, թէ «Վիզէները շշմեցուցին ժողովը...»:

Վիզէներու շարքին մաս կը կազմէին Վիզէն Գաթեան, Վիզէն Արէլեան, Վիզէն Տաքեւեան (Արեւմտեան Մ. Նահանգներ), Վիզէն Քորթեան (Աւստրալիա), Վիզէն Յովհաննիսեան (Հայաստան), Վիզէն Գապագեան (Սուրիա) եւ Վիզէն Աւագեան («Մարզիկ» պաշտօնաթերթ):

տարին անգամ մը եւ տեղի կ'ունենան բանակումներէ երկու տարի ետք:

ԿԱՅՔ ԷՉ

- Հ.Մ.Բ.Մ.ի կայք էջին վրայ (www.Homenetmen.org) ստեղծել օրացոյց մը, ուր Շրջանային եւ Մեկուսի վարչութիւններ յատուկ ծածկագիրով կարենան տեղադրել իրենց շրջաններու ձեռնարկներուն թուականները: Այս ձեւով շրջաններ կրնան հետաքրքրուիլ այլ շրջաններու յայտագիրներով եւ Կեդրոնական վարչութեան միջոցով մասնակցիլ անոնց:

- Հայկական եւ սկստական երգեր իրենց բառերով եւ նօթերով տեղադրուին կայք էջին վրայ:

- Շրջաններն ու Մեկուսի Շրջանները ունենան կայք էջի իրենց ներկայացուցիչը, որ կապը պիտի ըլլայ Կեդրոնական վարչութեան կայք էջի յանձնախումբին հետ:

- Կեդրոնական վարչութեան շրջաբերականներն ու քարտուղարական նօթերը տեղադրել database-ին մէջ, արխիւային դրութեամբ, որպէսզի վարչութիւններ կարենան յատուկ ծածկագիրներով ստուգել զանոնք:

- Բոլոր Շրջաններն ու Մեկուսի Շրջանները պարտին գործածել Կեդրոնական վարչութեան տրամադրած ե-նամակի հասցէները:

ԵՐԷՅԿԻՆ ՍԻՐԱՐՓԻ ԽՈՅԵԱՆԻ ԿՈՐՈՒՍԵԸ

Պատգամաւորական Ժողովը խոր կսկիծով իմացաւ միութեան հիմնադիրներէն Տիգրան Քինյ. Խոյեանի այրիին՝ երեցկին Սիրարփի Խոյեանի կորուստը Արեւելեան Մ. Նահանգներու մէջ, 106 տարեկան հասակին:

Այս առիթով ժողովը ընթերցեց Խոյեանի ընտանիքին ուղղուած ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան ցաւակցագիրը, որ կ'ըսէր՝

«Սգակիր Խոյեան ընտանիք,

«Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքը յաւեր կը կորսնցնէ ի գաղափարախօսութեան հիմնադիրներէն Տիգրան Քինյ. Խոյեանի այրին երեցկին Սիրարփի Խոյեանը, որ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան առաջին օրէն նուիրումով ու ամրակոտ հաւատքով զօրակցեցաւ իր ամուսնոյն, եղաւ ջարտագովը միութեան սկզբունքներուն եւ անոր ճիւղաւորման աշխարհի փարածքին: Այնպէղ ուր հայր մը սիրտը փրփեց՝ երեցկին Խոյեան անոր փուռաշնչերակ:

«Այսօր ան յառաջացած փարիքին կը մեկնի այս անցաւոր աշխարհէն, միանալու համար Հ.Մ.Ը.Մ.ի երկնային հոյիին, ուրկէ որպէս պահապան հրեշտակ պիտի հսկէ աշխարհացրի Հ.Մ.Ը.Մ.ի անվերջ գործունէութեան:

«Այս առիթով Կեդրոնական Վարչութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին անունով կու գայ իր խորագաց ցաւակցութիւնը յայտնելու Խոյեան ընտանիքին եւ անոր սգակիր պարագաներուն, աղօթելով առ Քարչրեալն Աստուած, որ անոր հոգին արժանի ընէ երկնային հրեշտակներու անդաստաններուն մէջ»:



- Կեդրոնական Վարչութեան ձեռնարկները ուղղակի պատկերասփռուին կայք էջին վրայ:
- Կեդրոնական Վարչութիւնը կայք էջի յանձնախումբին, ինչպէս նաեւ Շրջանային եւ Մեկուսի վարչութիւններուն միջոցով խստօրէն արգելէ «HMEM»-ի գործածութիւնը կայք էջերու եւ facebook-ին վրայ: «HMEM» գրութիւնը փոխարինել «Homenetmen»-ով:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

- Ուսումնասիրել Հ.Մ.Ը.Մ.ի «Չաթալպաչեան շէնք»-ին յանձանձումի կարելիութիւնը, իբրեւ եկամտի աղբիւր Կեդրոնական Վարչութեան ծրագիրներուն:
- Յատուկ կանոնադրութեան մը պատրաստութենէն ետք, Հ.Մ.Ը.Մ.ի 100ամեակին առիթով Կեդրոնական Վարչութիւնը նախաձեռնէ «Ինտառմընթ Ֆոնտ»-ի նախապատրաստական դրամահաւաքի մը, որ պատրաստ ըլլայ յայտարարուելու 95ամեակի տօնակատարութեան ընթացքին:

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ

- Հայ սկառտութեան 100ամեակին առիթով (2012), Կեդրոնական Վարչութիւնը Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.-Ս.Կ.ի միջոցով աշխատանք տանի Հայաստանի Հանրապետութեան մէջ դրոշմաթուղթ մը հրատարակելու:
- Նկատի ունենալով որ 2012ը Հայ սկառտութեան հիմնադրութեան 100ամեակն է, Կեդրոնական Վարչութիւնը 2012ին նախաձեռնէ յատուկ ձեռնարկներ՝ պատմական այս իրողութիւնը յիշատակելու համար:





Եղբ. Մոսիկ Թօփուզեան:

- Կեդրոնական Վարչութիւնը իր հնարաւորութիւններու սահմաններուն մէջ նախաձեռնէ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Բիւրականի բանակավայրին յարակից տարածքին շինարարական աշխատանքներուն:

- Կազմակերպել համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական վերաորակաւորման բանակում մը, որուն ծրագիրը մշակուի համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական Երզ համագումարին:

- Միջոցներ ստեղծել նախկին խմբապետներու համար համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակում կազմակերպելու:

- Զարկ տալ ցամաքամասային բանակումներու եւ խմբապետական վերաորակաւորման դասընթացքներու ու սեմինարներու:

- Մշակել երէցական կարգերու գիտելիքներու գիրքեր:

- Սկստական կարգերու դաստիարակչական գիրքերը վերամշակել եւ վերահրատարակել համապատասխան նոր գիրքերով:

- Որդեգրել լսատեսողական ժամանակակից ուսուցողական միջոցներ, օրինակ՝ Հ.Մ.Ը.Մ.ի կայք էջին վրայ ունենալ բաժին մը, ուր շրջանները կարենան տեղադրել դասախօսութիւններու շարքեր, երգեր, կանչեր, ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ.-

ՄԻԱՌՐԻ ԴՐՈՒԹԻՒՆ

10րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի գլխաւոր նորութիւններէն եղաւ միութեան կազմակերպական կառոյցին մէջ նոր դրութեան մը ստեղծման գաղափարը: Դրութիւն մը, որ տեղական առանձնայատուկ պայմաններու բերումով՝ արդէն իսկ կը գործէ Հայաստանի եւ Շուէտի մէջ: Միաւորի դրութիւնն է այդ: Ան կը բաւարարէ մասնաճիւղի մը կազմութեան կանոնադրային պայմանները չլրացնող Հ.Մ.Ը.Մ.ական կորիզներու կարիքները:

Միաւոր մը կրնայ ըլլալ սկստական կամ մարզական խումբ մը, որ հանդէս կու գայ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշին տակ, առանց սակայն վարչութիւն կամ անդամական կազմ ունենալու:

Միաւորները ուղղակի կը կապուին իրենց երկրի Հ.Մ.Ը.Մ.ական գերագոյն մարմնին:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. Հայաստանի մէջ ունի սկստական 14 միաւորներ, որոնցմէ հինգը Երեսնի տարբեր դպրոցներուն մէջ: Սթոքհոլմի մասնաճիւղը, իր կարգին, Շուէտի երեք քաղաքներուն մէջ (Սոտերթելիէ, Վեսթերոս, Խոփտէ) ունի սկստական եւ մարզական միաւորներ, որոնք անդամական շարքեր ունենալով հանդերձ՝ վարչութիւններ չունին եւ կը գործեն Սթոքհոլմի մասնաճիւղի հովանիին տակ:

Հ.Ա.Ս.Կ.ի մասնակցած միջազգային սեմինարներուն ներկայացուող նիւթեր, որոնցմէ կրնան օգտուիլ բոլոր շրջանները:

- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական իւրաքանչիւր բանակումի նախորդող օրերուն կազմակերպել «Արարատեան» կարգի դասընթացք: «Արարատեան» կարգի կազմակերպման համար նկատի առնել նախորդող խմբապետական համագումարներու առաջարկները:

- Կեդրոնական Վարչութիւնը նշանակէ Կեդրոնական Սկստական Յանձնախումբ մը՝ բաղկացած տարբեր շրջաններու փորձառու նախկին խմբապետ-խմբապետուհիներէ, միութեան յառաջիկայ քառամեակի սկստական աշխատանքները համադրելու, կազմակերպելու եւ իրագործելու համար:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

- Յաճախակի կերպով կազմակերպել ցամաքամասային դրութեամբ դիւանական ժողովներ:

- Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի հետ գործակցաբար, թափ տալ գործողական աշխատանքներու դէպի Արցախ եւ Զաւախք, իսկ նորաստեղծ գաղութներու մէջ հիմնել նոր մասնաճիւղեր:

- Հ.Մ.Ը.Մ.ի թանգարանի իրերու պատկերները տեղադրել կայք էջին վրայ՝ իրենց համապատասխան բացատրութիւններով:

- Նկատի ունենալով որ Հ.Մ.Ա.Կ.ի հետ յարաբերութիւնները յոյժ կարեւորութիւն կը ստանան եւ օրէ օր կը շեշտուի մի-

ՀԱՅ ՍԿԱՌՏՈՒԹԵԱՆ ՅՈՒՐԵԼԵՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

2012ը հայ սկստութեան համար կը հանդիսանայ յորելենական տարի:

2012ին պիտի տօնուի հայ սկստական շարժումի ստեղծման 100ամեակը եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Համաշխարհային Սկստական Շարժումին անդամակցութեան 15ամեակը:

1912ը կը նշէ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Աղեքսանդրիոյ «Կամք» մասնաճիւղին հիմնադրութեան 100ամեակը: Հ.Մ.Ը.Մ. «Կամք» հիմնուած է Շաւարշ Քրիսեանի նախաձեռնութեամբ, սկստական ու մարմնակրթական շարժում ստեղծելու մտահոգութեամբ:

Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ի ՊԱՏԳԱՄԱԻՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱԶՄ



ասնական աշխատանքներ կազմակերպելու հրամայականը, չբավարարելի համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու եւ բանակումներու մասնակցութեան հրաւերներով: Այլ միջոցառումներու եւս (Շրջանային մարզախաղեր, ժողովներ, սեմինարներ) Հ.Մ.Ա.Կ-ը մասնակցի որպէս չընտրուեց եւ ոչ՝ որպէս հիւր: Այս իմաստով, Հ.Մ.Ա.Կ-ը կատարէ իր վրայ պարտք դրուած նիւթական բոլոր պարտաւորութիւնները:

- Վերակազմակերպել այն Շրջանները եւ Մեկուսի շրջանները, որոնք պէտք ունին կազմակերպական յաւելեալ աշխատանքի:

- Երիտասարդները մղել վարչական գործերու, առիթ տալով անոնց որ ստանան ղեկավարի պաշտօնները:

- Հայաստանի Ա. Հանրապետութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի 95ամեակները Շրջանային մակարդակի տօնել, փառաշուք ձեռնարկներով:

- Յառաջացնել Հ.Մ.Ը.Մ.ի 100ամեակի յանձնախումբ մը՝ 100ամեակի աշխատանքներու եւ ծրագիրներու պատրաստութեան համար:

- Հայկական Յեղասպանութեան 100ամեակի ոգեկոչման ձեռնարկներուն Հ.Մ.Ը.Մ.ը բերէ իր ամբողջական մասնակցութիւնը գաղութներու թէ՛ համա-Հ.Մ.Ը.Մ.ական ընտանիքին ծիրէն ներս: Միաժամանակ, ան ունենայ իրեն յատուկ ձեռնարկները:

Այս առիթով, իւրաքանչիւր պատգամաւորի տրամադրուեցաւ յատուկ ծածկագիր մը (Password), որմով արտօնութիւն տրուեցաւ անոր մտնելու կայք էջին յիշեալ բաժինը եւ ընթերցելու ու տպելու ներկայացուած նիւթերը:

Երկլեզու (հայերէն, անգլերէն) կայք էջը պիտի ընդգրկէ թերթին լուրերուն ամփոփումը, հարուստ լուսանկարներով եւ ի հարկին տեսանիւթերով: Տեղ պիտի տրուի նաեւ թերթի խմբագրականին եւ գլխաւոր յօդուածներուն:

- Վերակենդանացընել «Մարզիկ»ի մէջ սկստական բաժինը, իսկ թերթին նիւթերը ներկայացնել կարճ, պարզ ու հասկնալի ձեւով:

- Յաւելեալ տեղ տալ վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ.ականներու (մարզիկ, սկստական) հետ տեսակցութիւններու նուիրուած բաժին:

- «Մարզիկ»ի նիւթական պատկերը հաւասարակշռելու համար, թերթին հատկապէս սակր բարձրացնել 20 առ հարիւրով: Ուղղակի բաժանորդագրութեան սակր 55 ամ. տոլարէն բարձրացնել 75 ամ. տոլարի:

- Զարկ տալ թերթին ծանուցումներու բաժնին եւ վերստեղծել «Քաջալեր անդամներ»ու դրութիւնը, տարեկան 300 ամ. տոլարի նուիրատուութեամբ:

ԿԱՆՈՆԱԳՐԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՆՈՒԹԻՒՆՆԵՐ

- Հ.Մ.Ը.Մ.ի Ծրագրի «Միջոցներ» բաժնին չորրորդ կէտը կ'ունենայ յաւելում մը եւ կը ներկայանայ հետեւեալ ձեւով (այս եւ հետագայ բոլոր յօդուածներուն վրայ կատարուած յաւելումները կամ բարեփոխումները կը ներկայացուին տարբեր գիրով):

Հ.Մ.Ը.Մ.ը իր նպատակը կ'իրագործէ-



Եղբայրներ Բագրատ Եսայեան, Ալեք Սաչատրեան եւ քոյր Տիրուհի Գրիգորեան:

- Կանոնագրի երկրորդ յօդուածը կը մասնատուի երկու բաժնի եւ կ'ունենայ յաւելում: Այսպէս՝

Ա. Միութեան անդամակցելու տրամադիր անհատը պէտք է գրաւոր դիմում կատարէ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի մը վարչութեան, ըստ իր շրջանի ներքին կանոնագրութեան:

Բ. 18 տարեկանէն վեր դիմորդները պարտին ունենալ նուազագոյնը երկու տարուան անդամակցութիւն ունեցող երկու Հ.Մ.Ը.Մ.ականներու երաշխաւորութիւնը:

- Կանոնագրի 19րդ յօդուածին Ա. կէտը կ'ենթարկուի բաժնի մը բարեփոխման. «կը յէ»ն կը վերածուի «կը գնահատէ»ի:

Անդամական Ընդհանուր Ժողովը, որուն հաշուետու է մասնաճիւղին վարչութիւնը-

Ա. Կը գնահատէ մասնաճիւղի վարչութեան տեղեկագրով ներկայացուած բարոյական եւ նիւթական գործունէութիւնը:

Ա. Սկստականութեամբ,

Բ. Ընդհանուր մարմնակրթանքով եւ մարզախաղերով,

Գ. Դասախօսութիւններով եւ հրապարակային ձեռնարկներով,

Դ. Հրատարակութիւններով, հայոց լեզուի, պատմութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքներուն նպաստող մշակութային ձեռնարկներով:

Ե. Ակումբներով եւ մարզարաններով:

- Կանոնագրի 19րդ յօդուածին Դ. կէտը կ'ունենայ յաւելում մը: Այսպէս, Անդամական Ընդհանուր Ժողովը՝

Ի պահանջեալ հարկին կ'ընտրէ կանոնագրի սահմանած թիւով ներկայացուցիչներ՝ Շրջանային Ներկայացուցչական Ժողովին համար, ինչպէս նաեւ կ'ընտրէ առաւելագոյնը 2 փոխ ներկայացուցիչներ, առանձին քուէարկութեամբ:

Նոյն տրամաբանութեամբ կը բարեփոխուի նաեւ կանոնագրի 32րդ յօդուածին Ը. կէտը, որ կը ստանայ հետեւեալ ձեւը: Շրջանային Ներկայացուցչական Ժողովը՝

Ի պահանջեալ հարկին կ'ընտրէ կանոնագրի սահմանած թիւով պատգամաւորներ՝ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին համար, ինչպէս նաեւ կ'ընտրէ առաւելագոյնը 2 փոխ պատգամաւորներ, առանձին քուէարկութեամբ:

- Կանոնագրի 34րդ յօդուածին մէջ յիշուած երեք ամսուան պայմանաժամը կը վերածուի մէկ ամսուան: Յօդուածը կը ներկայանայ այսպէս՝

Ժողովը կընայ հիմնական փոփոխութիւններ մտցնել ներքին Կանոնագրին մէջ, պայմանով որ փոփոխութեան առաջարկները առնուազն մէկ ամիս առաջ յանձնուած ըլլան բոլոր մասնաճիւղերուն եւ Անդամական Ընդհանուր Ժողովներու քննութեան:

- Կանոնագրի 58րդ յօդուածին մէջ կը բարեփոխուին Շրջանային վարչութեան անդամ ըլլալու նախատարուան փոխարէն հինգ տարուան Հ.Մ.Ը.Մ.ական եւ մէկ տարուան վարչական փոխարէն երկու տարուան վարչական)՝ Նոր յօդուածը կ'ըլլայ այսպէս՝

Շրջանային վարչութեան անդամ կընայ ընտրուիլ հինգ տարուան Հ.Մ.Ը.Մ.ական մը, որ նախապէս



Եղբայրներ Արմանտ Քիլեճեան, Բաֆֆի Վարժապետեան, քոյրեր Վերա Տէր Պողոսեան եւ Սեւան Նազարեան:

ԺՈՂՈՎԸ... ԺՈՂՈՎԵՆ ԱՌԱՋ

Արդի արհեստագիտութեան ընծեած բարիքներէն օգտուելով, Պատգամաւորական 10րդ Ընդհանուր Ժողովը իր աշխատանքներուն ըսկաւ... ժողովէն առաջ:

Ժամանակի խնայողութեան մտահոգութեամբ, Պատգամաւորական Ժողովէն ամիս մը առաջ, միութեան համացանցի կայք էջը օժտուեցաւ յատուկ բաժինով մը, որ ներկայացուցաւ ընթացաւարտ կեդրոնական վարչութեան տեղեկագիրը, գրատու եւ ընթերցում ձեւով: Առանձին արուեստը շրջաններու տեղեկագիրները, պատգամաւորներու անունները եւ լուսանկարները: Ներկայացուցաւ նաեւ ռազմավարական ծրագրաւորումի յանձնախումբին պատրաստած 157 էջոց թղթածրարը:

Այս առիթով, իւրաքանչիւր պատգամաւորի տրամադրուեցաւ յատուկ ծածկագիր մը (Password), որմով արտօնութիւն տրուեցաւ անոր մտնելու կայք էջին յիշեալ բաժինը եւ ընթերցելու ու տպելու ներկայացուած նիւթերը:

ՆԱԽՈՐԴՆԵՐԸ

Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառոյցին ըստեղծումէն ի վեր՝ 1974էն ստեղծուած են 10 Պատգամաւորական Ընդհանուր Ժողովներ, հետեւեալ ձեւով-

- Ա. Պատգամաւորական Ժողով- Պէլրուք, 13-15 Դեկտ. 1974:
- Բ. Պատգամաւորական Ժողով- Նիկոսիա, 6-8 Ապրիլ 1979:
- Գ. Պատգամաւորական Ժողով- Աթէնք, 14-17 Ապրիլ 1983:
- Դ. Պատգամաւորական Ժողով- Աթէնք, 17-20 Ապրիլ 1987:
- Ե. Պատգամաւորական Ժողով- Աթէնք, 29 Մարտ-3 Ապրիլ 1991:
- Զ. Պատգամաւորական Ժողով- Պէլրուք, 11-17 Ապրիլ 1995:
- Է. Պատգամաւորական Ժողով- Պէլրուք, 31 Մարտ-5 Ապրիլ 1999:
- Ը. Պատգամաւորական Ժողով- Ծաղկաձոր, 4-7 Յունիս 2003:
- Թ. Պատգամաւորական Ժողով- Ծաղկաձոր, 19-23 Յունիս 2007:
- Ժ. Պատգամաւորական Ժողով- Ծաղկաձոր, 5-10 Սեպտ. 2011:

Բանաձեւի յանձնախումբի անդամներ:



նուազագոյնը երկու տարի մաս կազմած է մասնաճիւղի մը վարչութեան, շրջանային խորհուրդներու կամ յանձնախումբերու:

- Կանոնագրի 88րդ յօդուածէն առաջ կ'աւելնայ նոր յօդուած մը հետեւեալ բանաձեւով՝

Հ.Ս.Ը.Մ.ի մարզիկները իրենց մարզական բոլոր տարազներուն վրայ պարտին կրել Հ.Ս.Ը.Մ.ի վահանը՝ գետեղուած ձախ կուրծքին վրայ:

- Կանոնագրի 69րդ եւ 85րդ յօդուածներէն առաջ կ'աւելնան մէկական նոր յօդուածներ: Այսպէս՝

Շրջանային վարչութիւնը կրնայ ոեւէ անդամ նշանակել իրեն ենթակայ յանձնախումբի մը մէջ՝ ենթակային պատկանած մասնաճիւղի վարչութեան հետ խորհրդակցաբար:

Կեդրոնական վարչութիւնը կրնայ ոեւէ անդամ նշանակել իրեն ենթակայ յանձնախումբի մը մէջ՝ ենթակային պատկանած Շրջանային կամ Մեկուսի վարչութեան հետ խորհրդակցաբար:

- Կանոնագրի «Ընդհանուր կանոններ» գլխուն տակ, 87րդ յօդուածէն ետք կ'աւելնայ նոր յօդուած մը՝

Հ.Ս.Ը.Մ.ը ունի «Ծառայութեան» եւ «Արժանեաց» իր շքանշանները, ինչպէս նաեւ՝ «Արտակարգ» պատուանշանը, որոնք ունին իրենց յատուկ կանոնագրութիւնները:

- Սկաուտական ընդհանուր կանոնագիրին 198րդ յօդուածին պատիժներու շարքը (4րդ եւ 5րդ կէտեր) կը բարեփոխուի եւ կը ներկայանայ հետեւեալ ձեւով.-

4րդ կէտ. Փողկապ կրելու իրաւունքէն զրկում.

Սկաուտը կը զրկուի փողկապ կրելու իրաւունքէն առաւելագոյնը չորս շաբաթ: Այս պատիժը կը նշանակէ թէ զրկուած է սկաուտական բոլոր իրաւունքներէն, բայց զերծ չէ կացուցուած իր պարտաւորութիւններէն:

5րդ կէտ. Կախակայում սկաուտական աշխատանքներէ.



Հաշուեքցմանիչ եւ պիւտճեական յանձնախումբերը աշխատանքի պահուն:

Սկաուտը կը զրկուի սկաուտական աշխատանքներու մասնակցելէ, բայց կը կատարէ իրեն տրուած բոլոր պարտականութիւնները: Այս պատիժը կը տրուի առաւելագոյնը չորս շաբաթուան համար:

ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ՎԵՐՋԻՆ ՆԻՍՏԵՐԸ

Ուրբաթ, 9 Սեպտեմբերի յետմիջօրէին տեղի ունեցաւ Պատգամաւորական Ժողովի նախավերջին նիստը, որ քննեց եւ հաստատեց 2011-2015 քառամեակի գործունէութեան նախահաշիւը եւ ըստ այնմ որոշեց միութեան Շրջանային եւ Մեկուսի շրջաններու ցենզի սակերը: Ժողովը լսեց նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան նախկին ատենապետ եղբ. Բիւզանդ Թորիկեանի գեկուցումը միութեան թանգարանին եւ պատմութեան գիրքերու շարքին մասին (Ա.-Դ. հատորներ): Եղբայր Թորիկեան ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ի «Վարդգէս Տէր Կարապետեան» թանգարանին պատմականը եւ թանգարանին հազարէ աւելի իրերուն բացատրականը կատարող գրքոյկի մը օրինակը: Ժողովը իր անվերապահ աջակցութիւնը յայտնեց գրքոյկը գեղատիպ հրատարակութեան մը արժանացնելու:

Ինչ կը վերաբերի պատմութեան գիրքերու շարքին, եղբ. Թորիկեան դիտել տուաւ, որ չորս հատորներէն ցարդ ծախւած են 934 օրինակներ, իսկ 518 օրինակներ ալ նուէր տրուած են գրադարաններու, միութիւններու եւ յատուկ անձնաւորութիւններու: Ան կոչ ուղղեց թափ տալու պատմութեան գիրքերու ցրումի աշխատանքներուն, որպէսզի կարելի ըլլայ անոնց հասոյթով շարունակել Հ.Մ.Ը.Մ.ի հրատարակչական ֆոնտի մնացեալ հրատարակութիւններուն իրականացումը:

Շաբաթ, 9 Սեպտեմբերի առաւօտեան, Պատգամաւորական Ժողովի աշխատանքները իրենց լրումին հասան Կեդրոնական վարչութեան նոր կազմի ընտրութեամբ: Անդամներու թիւ ճշդուեցաւ 13: Յետ քուէարկութեան, 2011-2015 քառամեակին համար Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան

անդամ ընտրուեցան եղբայրներ Գառնիկ Մկրտիչեան, Կարպիս Գապասագալեան, Միհրան Շիմշիրեան, Ստեփան Տէր Պետրոսեան (Լիբանան), Կարպիս Թովմասեան (Սուրիա), Բագրատ Եսայեան (Հայաստան), Հրաչ Սիսեռեան (Փարիզ), Արմէն Կէտիկեան (Գանատա), Յակոբ Թիւֆէնկճեան, Վիգէն Դաւթեան (Արեւմտեան Մ. Նահանգներ), Հրաչ Մեսրոպեան (Արեւելեան Մ. Նահանգներ), Վիգէն Քորթեան (Աւստրալիա) եւ Գարրոս Սէֆէրեան (Հարաւային Ամերիկա):



Քուէախոյզ յանձնախումբը աշխատանքի պահուն:

Հասաւ Պատգամաւորական Ժողովի փակման պահը: Սրտառուչ միջնորդութի մէջ, սրտի խօսքեր արտասանեցին ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան անդամները, շրջաններու ներկայացուցիչները եւ ժողովին ղեկանը: Խօսք առաւ նաեւ Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Մկրտիչ Մկրտիչեան եւ յայտնեց, թէ «Ամէն պատճառ կայ հաւատարմութեամբ, որ Հ.Մ.Ը.Մ.ը կը թեւակոխէ նոր, փայլուն շրջան մը»: Ան ըսաւ, որ վերջին 20-25 տարիներուն այն ինչ որ գաղափարական էր արուես-

ները իսկապէս ազնիւ են, եւ ինչ որ ազնիւ է՝ ուժեղ է, եւ ինչ որ ուժեղ է անպայման կը յաղթանակէ» (խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 34):

Խօսքերէն ետք, Պատգամաւորական Ժողովին փակումը կատարուեցաւ ժամը 11.30ին, «Յառաջ նահատակ» քայլերգի խմբերգով եւ միութեան պատմութեան մէջ նոր էջ մը բացած ըլլալու արդար գոհունակութեամբ:

'Made from one single slice of natural Australian opal'



Classique

OPAL DIAL WATCH


Sarkis Der Bedrossian

Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.
123 Clarence Street
Sydney 2000
Australia

Phone: +61 2 9290 2199
fax: +61 2 9262 1630
Website: www.classiquewatches.com
Email: Info@classiquewatches.com



Ձախին՝ ընթացաւարտ Կեդր. Վարչութեան անդամներ (կը բացակային եղբայրներ Գօգօ Պալեան եւ Զրաչ Սիսեռեան) Զ.Մ.Ա.Կ.ի ներկայացուցիչին հետ: Աջին՝ նախկին Կեդր. Վարչութիւններու անդամներ:



«Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագրական եւ վարչական կազմերու անդամներ:



Զ.Մ.Ը.Մ.ի Զարաւային Ամերիկայի պատգամաւորներ:



Զ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ պատգամաւորներ:



Զ.Մ.Ը.Մ.ի Գանատայի պատգամաւորներ:



Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու պատգամաւորներ:



Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու պատգամաւորներ:



Հ.Մ.Ը.Մ.ի Եւրոպական ցամաքամասի պատգամաւորներ:



Հ.Մ.Ը.Մ.ի Քուէյթի, Ամմանի, Գահիրէի եւ Պաղտատի պատգամաւորներ:



Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի պատգամաւորներ:



Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ պատգամաւորներ:



ՓԱՌԱՇՈՒՔ ԸՆԾԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՀԱՆԴԷՍ Ի ՊԱՏԻ ՊԱՏՊԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ

- «ԻՐ ՀԱՐՈՒՍՏ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵԾ ԴԵՐ Է ԿԱՏԱՐԵԼ ԱՇԽԱՐՀԱՍՓԻՒՌ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԿԵԱՆՔՈՒՄ», ԿԸ ՀԱՍՏԱՏԷ ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ՊԱՏՊԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ ԻՐ ՅՂԱԾ ԳՈՎԵՐՁԻՆ ՄԷՋ:

- Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՆ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԷ 10 ՀԱԶԱՐ ՏՈԼԱՐ:
- ՆԵՐԿԱՆԵՐԸ ԼԻԱԲՈՒՌՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ԿԸ ՀԱՍՏԱՏԵՆ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ԻՐԵՆՑ ԱԶԱԿՑՈՒԹԻՒՆԸ:

Վերջին երկու Պատգամաւորական ժողովներուն ստեղծուած գեղեցիկ աւանդութեան համաձայն, 10րդ Պատգամաւորական ժողովի աւարտին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. ճաշկերոյթ մը կազմակերպեց ի պատիւ հիւր պատգամաւորներու եւ արաւիրեալներու: Ծաշկերոյթը տեղի ունեցաւ Շաբաթ, 10 Սեպտեմբեր 2011ի երեկոյեան, Երեւանի «Ֆլորանս» նորակառոյց շքեղ ճաշարանին մէջ, ներկայութեամբ 250 Հ.Մ.Ը.Մ.ականներու եւ հիւրերու, որոնց կարգին՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի բարեկամներ եւ բարերարներ:

Իրենց ներկայութեամբ ճաշկերոյթը պատուեցին Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեան, Բիւրոյի անդամներ Մկրտիչ Մկրտիչեան եւ Լեւոն Մկրտչեան, Հ.Յ.Դ. Հայաստանի Գերագոյն Մարմնի ներկայացուցիչ Արմէն Ռուստամեան, «Երկիր Մեզի» պատկերասփիւռի կայանի տնօրէն Գե-



Եղբ. Գագնիկ Մկրտիչեան:

ղամ Մանուկեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի ընթացաւարտ ու նորընտիր Կեդրոնական Վարչութիւններու անդամներ:

Ծաշկերոյթին բացումը կատարելով, եղբ. Բագրատ Եսայեան Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի անունով ողջունեց 10րդ Պատգամաւորական ժողովին աւարտը եւ յաջողութիւն մաղթեց միութեան յառաջիկայ քառամեակի աշխատանքներուն:

Խօսք առաւ նորընտիր Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան եւ շնորհակալութիւն յայտնեց ժողովի հիւրընկալ շրջանին՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ին: Ան 10րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովը անկիւնադարձային նկատեց միութեան պատմութեան մէջ եւ ընդգծեց, որ ռազմավարական իր նոր ծրագրին շնորհիւ Հ.Մ.Ը.Մ. յառաջիկայ 5-10 տարիներուն պիտի ըլլայ երիտասարդութիւնը ներգրաւող արդիական ու գրաւիչ միութիւն մը, որ իրապէս պիտի կարենայ քայլ պահել ժամանակի պահանջներէ:



Եղբ. Բագրատ Եսայեան:

րուն հետ, գոհացում տալու համար նոր սերունդի ակնկալություններուն:

Ապա, հրաւիրուեցաւ Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեան իր պատգամը փոխանցելու ներկաներուն:

Մարգարեան յոյս յայտնեց, որ 10րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը նոր սկիզբ մը կը դառնայ Հ.Մ.Ը.Մ.ի նորանոր վերելքի: Ան ըսաւ, որ «Հ.Մ.Ը.Մ.ը մեր հայկական իրականութեան մէջ գործող ամենաբազմանդամ կառույցն է: Հ.Մ.Ը.Մ.ը հայ իրականութեան մէջ գործող ամենամեծ կառույցն է: Հ.Մ.Ը.Մ.ը հայ իրականութեան մէջ աշխատող ամենամեծ համահայկական կառույցն է, եւ այս առումով ակնկալիքը Հ.Մ.Ը.Մ.ից մեծ է: Հ.Մ.Ը.Մ.ը պարտաւոր է մեծանալ, ընդարձակուիլ: Դա Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնն է: Հ.Մ.Ը.Մ.ը պէտք է կարողանայ կազմակերպական իր ցանցով ծածկի այսօրուան հայկական իրականութեան սփռուածութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.ը պէտք է լինի այնտեղ, որտեղ հայկական կազմակերպուած կեանք գոյութիւն ունի»:

Շարունակելով, Մարգարեան դիտել տուաւ, որ «Հ.Մ.Ը.Մ.ը պէտք է նմանի մեր հայկական իրականութեան: Հայ



ժողովրդի, հայութեան առանցքը, ծանրութեան կեդրոնը Հայաստանի Հանրապետութիւնն է: Հ.Մ.Ը.Մ.ի առանցքը եւս պէտք է ձեւաւորուի Հայաստանի Հանրապետութիւնում: Հ.Մ.Ը.Մ.ը պէտք է դառնայ նաեւ հիմնականում հայաստան-

with the complements of

Restaurant Al-Mayass

եան կառույց» (Խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 33):

Ճաշկերոյթին առաջին անակնկալը եղաւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի գովերձը՝ ողջոյնի խօսքը Պատգամաւորական Ժողովի մասնակիցներուն: Խօսքը ընթերցեց նախագահի աշխատակազմի անդամ Աւետիս Պէրպէրեան: Խօսքին մէջ նախագահ Սարգսեան դիտել կու տար, որ «Իր հա-

ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՆԵՐԸ

- Յ.Յ.Դ. Բիւրօ	10.000 \$
- Յրաչ Սիւեռեան (Փարիզ)	5.000 \$
- Յ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանի պատգամաւորներ	2.000 \$
- Բագրատ Եսայեան (Հայաստան)	1.000 \$
- Օշին Փիրումեան (Հայաստան)	1.000 \$
- Սոնա Առաքելեան (Հայաստան)	1.000 \$
- Հայկազ Թահմազեան (Տուպայ)	1.000 \$
- Արտիոմ (Հայաստան)	900 \$
- Յ.Մ.Ը.Մ.ի Գանատայի շրջանի պատգամաւորներ	600 \$
- Յ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ շրջանի պատգամաւորներ	500 \$
- Յ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու շրջանի պատգամաւորներ	500 \$
- ՀՕՄ - Հայաստան	500 \$
- Միհրան Շիմշիրեան (Լիբանան)	500 \$
- Արման Քիլեճեան (Արեւմտեան Մ. Նահանգներ)	500 \$
- Կոլիա Խաչատրեան (Տուպայ)	500 \$
- Անէթ Խաչատրեան (Տուպայ)	500 \$
- Արտակ Եսայեան եւ ընկերներ (Հայաստան)	500 \$
- Գրիգորիս Պողարեան (Լիբանան)	300 \$
- Յակոբ Մելիքսեթեան (Քուէյթ)	300 \$
- Մի ոմն	300 \$
- Վահրամ Դանիէլեան (Արեւելեան Մ. Նահանգներ)	200 \$
- Արմէն Կետիկեան (Գանատա)	200 \$
- Չուլալ եւ Բալենի Աւագեաններ (Լիբանան)	200 \$
- Յ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի շրջանի պատգամաւորներ	200 \$
- Մի ոմն	200 \$
- Մի ոմն	200 \$
- Արմէն Նազարեան (Հայաստան)	100 \$
- Յ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի շրջանի պատգամաւորներ	1.200.000 դրամ
- Յ.Յ.Դ. «Արամ Մանուկեան» կոմիտէութիւն (Կապան)	1.000.000 դրամ
- Յ.Մ.Ը.Մ.ի Լոնտոնի շրջանի պատգամաւորներ	200.000 դրամ



Աւետիս Պէրպէրեան կ'ընթերցէ Հայաստանի նախագահին գովերձը:



Արուեստագիտուհի Սիլվա Իւզբաշեան ասմունքի պահուն:

րուստ պատմութեան ընթացքում Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը մեծ դեր է կատարել աշխարհասփիւռ հայութեան կեանքում»: Խօսքը Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին կը մաղթէր բեղմնաւոր աշխատանք՝ ընդլայնելու համար ազգանուէր եւ հայրենանուէր իր ծառայութիւնները (Խօսքը տեսնել առանձին):

Խօսքերէն ետք, ճաշկերոյթը ընթացք առաւ գեղարուեստական ճոխ յայտագիրով մը, որուն մաս կազմեցին հանրածանօթ ասմունքող Սիլվա Իւզբաշեան, երգիչներ Մակիչ (Մկրտիչ Մկրտիչեան), Ալլա Լեւոնեան, Սոնա Շահգեղեան, Սոնիա, Մատաղ Հրամանիչ, «Ճլորանս» համոյթ եւ ուրիշներ:

Երգն ու պարը ստեղծեցին խանդավառ մթնոլորտ: Ընդհանուր ոգեւորութիւնը իր գագաթնակէտին հասաւ ներկաներու լիաբուռն նուիրատուութիւններով: Պատգամաւորական Ժողովի մասնակից շրջաններու պատգամաւորներ եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի բարեկամներ նիւթական իրենց աջակցութեամբ անգամ մը եւս խօսուն ապացոյցը տուին այն գուրգուրանքին եւ վստահութեան, զոր կը տածեն միութեան հայաստանեան կառույցի աշխատանքներուն նկատմամբ: Անոնք քսակները լայն բացին այն յոյսով, որ իւրաքանչիւր նուիրատուութիւն կը վերածուի բազմապատիկ բարիքի՝ ի շահ նոր սերունդի դաստիարակութեան եւ ի խնդիր վաղուան հօր հայրենիքի կերտման:

Նուիրատուութիւններու շարքին եղաւ օրուան երկրորդ անակնկալը՝ Հ.Յ.Դ. Բիւրոյի 10 հազար տոլարի նուիրատուութիւնը Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ին, առ ի քաջալերանք հայրենիքի մէջ իր աշխատանքներու տարածման ու ամրապնդման: Նուիրատուութիւնը ընդունուեցաւ երկար ծափահարութիւններով, նկատի ունենալով անոր նիւթական ու մանաւա՛նդ բարոյական մեծ արժէքը բազմաթիւ մարտահրաւէրներու ընդդէմ գտնուող միութեան մը համար:

Այնուհետեւ ուրախութիւնն ու ցնծութիւնը շարունակուեցան Հ.Մ.Ը.Մ.ական շէն մթնոլորտով: Երգեցին ու պարեցին բոլորը: Ու երբ հրաժեշտի պահը հասաւ, շրջանակ մը կազմած, թեւ-թեւի տուած, ներկաները «Յտեսութիւն» երգեցին իրարու՝ այն խոստումով, որ «Դարձեալ իրար կը հանդիպինք, ու կ'երգենք միաձայն...»:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՊԱՏԳԱՄԸ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի 10ՐԴ ՊԱՏԳԱՄԱԲՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

Ծաղկաձոր, Հայաստան, 5 Սեպտեմբեր 2011

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն քրիստոնէական ջերմ սիրով, ազգային վառ ապրումներով ու հայրապետական օրհնութեամբ կ'ողջունենք Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան 10րդ Պատգամաւորական Ժողովը:

Արդարեւ, արդեօք կա՞յ հայ մը, Հայաստանի մէջ թէ Սփիւռքի որեւէ անկիւնը, որ չէ լսած Հ.Մ.Ը.Մ.ի մասին: Արդեօք կա՞յ հայ մը, որ չէ հետեւած Հ.Մ.Ը.Մ.ի յաղթանակներուն: Վերջապէս, արդեօք կա՞յ հայ մը, որ չէ հպարտացած «Քարշրացի՛ր - քարշրացուր» նշանաբանը եւ «Յառաջ նահապետի ցեղի անմահներ...» քայլերգը իր կեանքին առանցքը ու գործին ուղեցոյցը նկատած Հ.Մ.Ը.Մ.ի իրագործումներով:

Այսպէ՛ս եղաւ Հ.Մ.Ը.Մ.ը: Ան դարչաւ հայ ժողովուրդի հարազատ ոգիին, ամուր կամքին ու պայծառ փեսիլքին շօշափելի արտայայտութիւնը մեր կեանքէն ներս: Ան դարչաւ դէպի յաղթանակ ընթացող մեր հաւատարմական երթին ջահակիրը: Ան դարչաւ մեր բարոյական, մշակութային ու ազգային բիրեղ ապրումներուն ու ար-

ժեքներուն անլռելի զանգակապունը՝ իր կեանքին ու ծառայութեան մէջ կեդրոնական ներկայութիւն դարչընելով հայ եկեղեցին, իր հոգեմտաւոր աւանդութիւններով, հայ մշակոյթը՝ իր հարազատ արժեքներով, Հայաստանը իր վառ երազներով:

Հ.Մ.Ը.Մ.ը երբեք չդաւանանց իր դաւանած սկզբունքներուն, արժեքներուն ու նպատակներուն, հակառակ Սփիւռքի դժուար ու փխուր պայմաններուն: Ան գործեց ու ծառայեց ամբողջական հայութեան ու ամբողջական Հայաստանի հաւաքքով ու փեսիլքով: Այսօր, երբ Հ.Մ.Ը.Մ.ը նստի փրական ներկայութիւն է հայրենի հողին վրայ, վարահ ենք, որ վերանորոգ վճռակամութեամբ ու յանձնառութեամբ ան պիտի շարունակէ իր համազգային առաքելութիւնը: Առաքելութիւն մը, որ ամէնօրեայ պայքար է ի խնդիր մարդակերպումի, հայակերպումի, ազգակերպումի ու հայրենակերպումի:

Սա պահուն, երբ Հ.Մ.Ը.Մ.ը կը գումարէ իր 10րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը, Հայաստանի ու Սփիւռքի բոլոր կողմերէն եկած իր ներկայացուցիչներուն մասնակցութեամբ, Մեր սպասումն է, որ սովորական աշխատանքներէն անդին Հ.Մ.Ը.Մ.ը, որպէս մեր կեանքէն ներս կարեւոր դերակատարութիւն ունեցող համազգային կառոյց, վերանորոգէ իր ուխտը առաւել նուիրումով ծառայելու մեր ազգին ու հայրենիքին գերագոյն շահերուն ու անկորնչելի արժեքներուն:

Կ'աղօթենք առ Քարշրեալն Աստուած, որ միշտ գորեղ պահէ Հ.Մ.Ը.Մ.ը իր առաքելութեան ճամբուն վրայ:

Հայրական ջերմ սիրով,
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ



Եղբ. Կարախա Գապասագալեան կ'ընթերցէ Արամ Ա. Կաթողիկոսին պատգամը:

1 Սեպտեմբեր 2011
Անթիլիաս, Լիբանան

«ԲԱՐՁՐԱՑԻՐ-ԲԱՐՁՐԱՑՐՈՒՄ» ՅԱԲԻՏԵՆԱԿԱՆ ՄԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՂ


(ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ
ՆԱԹԱՆ ԵՊՍ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ԽՕՍԲԸ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի 10ՐԴ
ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

Նախքան ամենայնի, քաղցր պարտականությունը եւ մեծ պատիւը ունեւ Հ.Մ.Ը.Մ.Ի 10րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովի մասնակիցներին եւ ղիւանին փոխանցելու ազգիս Վեհափառ Հայրապետին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի օրհնությունները, Հայրապետական ողջոյնները, Հայրական սէրը եւ հոգածությունը: Մաղթանք յաջողութեանց ամենայն ձեր բարի գործոց:

Վեհափառ Հայրապետը մասնաւոր յորդորով մեզ խնդրեց փոխանցելու իր այն խոր զգացմունքները, որ մշտապէս տածել է Սփիւռքի մեր երիտասարդների եւ Հ.Մ.Ը.Մ.Ի գործունէութեան նկատմամբ:

Հայ իրականութեան մէջ կ'երեւի թէ վերջին տասնամեակներում է որ աւելի սկսուեց լսուել Հ.Մ.Ը.Մ. անունը: Կար ժամանակ, երբ մենք ընդամէնը ասում էինք «Հայ սկառտներ», եւ որոնք կարծես թէ հակառակորդն էին Սովետական Հայաստանի մէջ եղած պիոնէրությունները: Սակայն, այդ մէկը գնաց, իսկ սա աւելի քան ինչ տասնամեակէ ապրում է, գործում է եւ իրողություն է մեր կեանքի մէջ:

Ամէն ժամանակ ունի իր մարտահրաւէրները եւ այդ մարտահրաւէրները դիմակայելու ճանապարհին է, որ հայ ազգը կարողացել է լծակներ ստեղծել իր կեանքը գոյատեւելու համար: Լծակներ՝ որով կարողացել է ապահովել իր կեանքը, որպէս ազգային ժողովուրդ, մշակոյթ ստեղծող եւ ամբողջ մարդկությունների մի անբաժան եւ յաւիտենական մասնիկ: Այսպիսով է որ 1910ական թուականներին գիտենք թէ ի՞նչ վիճակում էր հայ ազգը գտնուում, հաւաքուեցին զմիմեանս մէկտեղ, ծառայելու ազգին, առաջին հերթին կրթելով իրենց մարմինը եւ միտքը: «Բարձրացիր-բարձրացրու»՝ յաւիտենական մի առաջնորդող, որ մարդը ինքը առաջին հերթին պէտք է կարողանայ հասնել բարձունքների, ուժ, կարողություն ունենայ, որպէսզի միւսներին էլ իր յետեւից կարողանայ բարձրացնել: Ահաւասիկ, այսօր եւս շատ արդիական է Հ.Մ.Ը.Մ.Ի գործունէությունը, որովհետեւ արդի մեր դարը տալիս է այնպիսի մարտահրաւէրներ, որ առաջին հերթին դիմակայելու դուրս գան երիտասարդները: Մարտահրաւէրներ՝ որ գալիս են երիտասարդների միջոցով մեզ հրաւիրելու, որ այդ դժուար



րությունները համատեղ կարողանանք տանել: Այդ մարտահրաւէրներից առաջինը, գիտէք, որ միջազգային մշակոյթների խառնումի հետ միասին աւելի դժուար է եղել երիտասարդի հայապահպանությունը: Որտեղ չկայ մշակոյթների բախում, այնտեղ դժուար է լինում սեփականը պահել:

Այսօր, համակարգչային դարում մարդիկ ուժացման են գնում եւ չեն շփուում զմիմեանս, այլ նրանք հեռաւորութեան վրայ են եւ այսօր Հ.Մ.Ը.Մ.ն է որ գալիս է երիտասարդներին բերելու մէկտեղ, ապրելու, մտածելու, միասին հոգ տանելու ազգի ապագայի, իրենց իսկ անձի ապագայի մասին: Ահաւասիկ, այս ամէնը շատ արժեւորում է մեր կողմից եւ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին մշտապէս սատար է եղել եւ կարող է նաեւ հպարտութեամբ ասել, որ հայ առաջին Հ.Մ.Ը.Մ.ականներից մէկը դարձաւ մեր եկեղեցու մեծագոյն դէմքերից մէկը՝ Երջանկայիշատակ Վազգէն Առաջին Կաթողիկոսը, որը ոչ միայն Վազգէն Առաջին եղաւ, այլեւ՝ սկառտ առաջին կարող ենք կոչել:

Սիրելի եղբայրներ եւ քոյրեր, ձեզ մաղթում եմ ուժ, կարողություն, որպէսզի դուք կարողանաք այսօրուան երիտասարդներին կտրել իրենց բոլոր ժամանցներից, կտրել իրենց համակարգիչներից եւ ինթըրնէթից, բերել-պահել նրանց հայ, դարբնել նրանց հա՛յ, գորացնել նրանց հա՛յ եւ բարձրացնել այնքան, որպէսզի այդ բարձունքը հասնի Մասիսի գագաթին:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՌԱՆՑՔԸ ՊԷՏՔ Է ՁԵՒՄԻՈՐՈՒԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՒԻՆՈՒՄ

(Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ ԽՕՍՔԸ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի 10ՐԴ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՓԱԿՄԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ)

Դաշնակցութեան Բիւրոյի անունից ողջունում եմ Հ.Մ.Ը.Մ.Ի 10րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովի աւարտը, շնորհաւորում եմ նորընտիր կեդրոնական Վարչութիւնը եւ յոյս ունեմ, որ 10րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովը նոր սկիզբ դառնայ Հ.Մ.Ը.Մ.Ի նորանոր վերելքի:

Հ.Մ.Ը.Մ.ը մեր հայկական իրականութեան մէջ գործող ամենաբազմաճիւղ կառույցն է: Հ.Մ.Ը.Մ.ը հայ իրականութեան մէջ գործող ամենամեծ կառույցն է: Հ.Մ.Ը.Մ.ը հայ իրականութեան մէջ աշխատող ամենամեծ համահայկական կառույցն է, եւ այս առումով ակնկալիքը Հ.Մ.Ը.Մ.ից մեծ է:

Հ.Մ.Ը.Մ.ը պարտաւոր է մեծանալ, ընդարձակուիլ: Դա Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնն է: Հ.Մ.Ը.Մ.ը պէտք է կարողանայ կազմակերպական իր ցանցով ծածկի այսօրուան հայկական իրականութեան սփռուածութիւնը: Հ.Մ.Ը.Մ.ը պէտք է լինի այնտեղ, որտեղ հայկական կազմակերպուած կեանք գոյութիւն ունի, հայկական համախմբուածութիւն գոյութիւն ունի: Սա անհրաժեշտութիւն է եւ Հ.Մ.Ը.Մ.ի պարտականութիւնն է, առաքելութիւնն է, որ այս գործը ի կատար ածի: Նա պէտք է լինի այնտեղ, որտեղ հայութիւն կայ: Որտեղ հայութիւն կայ, այնտեղ Հ.Մ.Ը.Մ.ը գործ ունի անելու, առաքելութիւն ունի, որ պէտք է ի կատար ածի:

Հ.Մ.Ը.Մ.ը պէտք է նմանի մեր հայկական իրականութեան: Հայ ժողովրդի, հայութեան առանցքը, ծանրութեան կեդրոնը Հայաստանի Հանրապետութիւնն է: Հ.Մ.Ը.Մ.ի առանցքը եւս պէտք է ձեւաւորուի Հայաստանի Հանրապետութիւնում: Հ.Մ.Ը.Մ.ը պէտք է դառնայ նաեւ հիմնականում հայաստանեան կառույց: Սա պէտք է լինի բնական ընթացքով: Սա չպէտք է լինի արհեստական լուծումով: Հ.Մ.Ը.Մ.ը պէտք է Հայաստանում դառնայ կարեւոր դերակատարութիւն ունեցող ազգային կառույց: Հ.Մ.Ը.Մ.ը դրանում ունի զանազան առաքելութիւններ: Հայապահպանումի առու-



մով, Հայաստանի Հանրապետութիւնում ունի քաղաքական հասարակութեան ձեւաւորման առաքելութիւն: Մենք ցանկանում ենք, որ չուշանայ այս թիրախի նուաճումը եւ Հ.Մ.Ը.Մ.ը իսկապէս Հայաստանում դառնայ իրաւ անունին

Հ.Մ.Ը.Մ.ը պէտք է Հայաստանի մէջ յաղթի փողոցին: Հ.Մ.Ը.Մ.ը Հայաստանի մէջ պէտք է սերունդների դաստիարակութեան առումով յաղթի յանցագործ աշխարհի վարք ու բարքին: Հ.Մ.Ը.Մ.ը պէտք է Հայաստանի մէջ կարողանայ հայ քաղաքական հասարակութեան կազմակերպման գործին մէջ ունենալ յաջողութիւն:

համարժէք հայաստանեան կառույց, ունենայ դերակատարութիւն հայրենի հասարակութեան մէջ եւ կարողանայ, այն նոյն դերակատարութիւնը որ ունեցել է սփիւռքեան պայմանների մէջ, ունենայ նաեւ հայրենի իրականութեան մէջ, Հայաստանի մէջ: Եթէ այնտեղ մեզի սպասում է զանազան բնագաւառներում աշխատանք, Հայաստանի մէջ, քաղաքացիական ձեւաւորումը հիմնական հարց է: Հ.Մ.Ը.Մ.ը պէտք է Հայաստանի մէջ յաղթի փողոցին: Հ.Մ.Ը.Մ.ը Հայաստանի մէջ պէտք է սերունդների դաստիարակութեան առումով յաղթի յանցագործ աշխարհի վարք ու բարքին: Հ.Մ.Ը.Մ.ը պէտք է Հայաստանի մէջ կարողանայ հայ քաղաքական հասարակութեան կազմակերպման գործին մէջ ունենալ յաջողութիւն: Ես վստահ եմ, որ դա լինելու է, բայց ուզում եմ որ Հ.Մ.Ը.Մ.ը իր մէջ ուժ գտնի, կամք գտնի, այս նպատակը օր առաջ իրականացնելու համար:

Հ.Մ.Ը.Մ.Ը ՀՍԿԱՅԱԿԱՆ ԴԵՐ ՈՒՆԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ

(Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ԱՆԴԱՄ ԼԵՒՈՆ ՄԿՐՏՉԵԱՆԻ ԽՕՍԲԸ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի 10ՐԴ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

Թ ոյլ տուէք Հ.Յ.Դ. աշնակցութեան Բիւրոյի անու-
նից ողջունել Հ.Մ.Ը.Մ.Ի 10րդ Պատգամաւորա-
կան Ընդհանուր ժողովը եւ ցանկանալ առողջ,
բեղուն աշխատանք, ինչպէս միշտ եղել է Հ.Մ.Ը.Մ.Ի համար,
իր գործունէութեան արդէն 100 տարին բոլորելու շրջանում:

Մի քանի տարի է մնացել, որպէսզի Հ.Մ.Ը.Մ.ը կարողա-
նայ թեւակոխել իր գործունէութեան երկրորդ 100ամեակը եւ
այս իմաստով մենք շնորհակալ ենք մեր կազմակերպութեա-
նը՝ այն մեծ, հզօր աշխատանքի համար, որ այս տարիներին ըն-
թացքում կատարել է հայ ժողովրդի համար: Իր ծննդեան
պահին, Ա. Հանրապետութեան ծանր շրջանում, ապա
Սփիւռքի կառուցման դժուարին գործում, ապա Հայաստա-
նի անկախութեան հռչակման շրջանում Հ.Մ.Ը.Մ.ը կարողա-
ցաւ իրականացնել իր ամենամեծ առաքելութիւնը՝ առողջ
մարմնում ձեւաւորելով ազգային ոգի հասկացողութիւնը եւ,
պատահական չէ, որ Հ.Մ.Ը.Մ.Ի շարքերից դուրս եկած երի-
տասարդներն էին, որ համալրեցին մեր ազգային կեանքի բո-
լոր ճակատները՝ պատուով կատարելով իրենց առաքելու-
թիւնը:

Մենք այսօր հաւաքուում ենք Հայաստանի ամենանուիրա-
կան մեր տօնակատարութեան շեմին: Հայաստանի Հանրա-
պետութիւնը 20 տարեկան է եւ Հ.Մ.Ը.Մ.ը առաջիններից
մէկն է Սփիւռքում, որ հաստատաքայլ մտաւ հայրենիք, հայ-
րենիքի բոլոր հատուածները եւ կատարեց իր պարտականու-
թիւնը՝ փորձելով հայ երիտասարդութիւնը դաստիարակել



ազգային ոգով, առողջ ոգով, ձեւաւորելով համահայկական
միասնութեան գաղափարախօսութիւնը:

Այսօր, հսկայական խնդիրներ կանգնած են մեր կազմա-
կերպութիւնների առջեւ՝ յատկապէս Սփիւռքում, որովհե-
տեւ ձեւաւորուել է բաւականին բարդ իրավիճակ: Արդէն
սփիւռքեան չորրորդ, հինգերորդ սերունդն է որ փորձում է
պահպանել իր հայկական գոյութիւնը: Հայաստանեան բե-
կորներ յայտնուել են Սփիւռքում: Այս փոխ յարաբերութիւն-
ների, ձեւաւորող նոր գաղթօճախների, հների պահպան-
ման, այս մեծ առաքելութեան մէջ Հ.Մ.Ը.Մ.ը հսկայական
դեր ունի կատարելու համար:

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ

(Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ԱՆԴԱՄ ՄԿՐՏԻՉ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ԽՕՍԲԸ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի 10ՐԴ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՓԱԿՄԱՆ ՆԻՍՏԻՆ)

Ե ս յստակօրէն կը տեսնեմ, որ Հ.Մ.Ը.Մ.Ի ապագան
փայլուն է, հակառակ այն մտահոգութիւններուն,
որ արտայայտուեցան այս ժողովին, եւ շատ հաւա-
նաբար տեղին էին: Այսօր ամէն պատճառ կայ հաւատարու,
որ Հ.Մ.Ը.Մ.ը կը թեւակոխէ նոր, փայլուն շրջան մը: Ասոր
համար կան առարկայական պատճառներ:

Վերջին 20-25 տարիներուն, այն ինչ որ գաղափարական
էր, արուեստական ձեւով փորձուեցաւ սնանկ յայտարարել
եւ մարդկութեան հրամցուեցաւ տնտեսականութեան յաղ-
թանակը, որ այսօր, միայն 20 տարի վերջ, չարաչար պարտը-
ւած է: Այսօր, ամէն կողմ այդ դրութիւնը տազնապի մէջ է:
Երկիրներ կը սնանկանան: Ժողովուրդներ անելի մատնուած

են եւ երիտասարդութիւնը, որ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմքն է, տազնապի մէջ է եւ փողոց իջած է: Այսօր գաղափարականութեան վերադարձ մը կայ եւ «Բարձրացիր-բարձրացուր»ը ու անոր ետին կանգնող գաղափարական արժէքները իսկապէս ազնիւ են, եւ ինչ որ ազնիւ է՝ ուժեղ է, եւ ինչ որ ուժեղ է՝ անպայման կը յաղթանակէ: Ուրեմն, եթէ կասկածներ կան միտքերու մէջ, որ Հ.Մ.Ը.Մ.ը վայրէջքի մէջ է, այդպէս չէ, Հ.Մ.Ը.Մ.ը յատկապէս այսօրուրնէ սկսեալ վերելքի մէջ է:

Վերելքը սկսած է, որովհետեւ այս ժողովը ցոյց տուաւ, որ հասկցած է իրականութիւնը եւ իրապաշտ է: Իրապաշտ ըլլալ չի նշանակեր պատեհապաշտ ըլլալ: Երբ մեր ամէնէն աւանդական շրջանները կը հասկնան, որ գաղութներու մէջ,

շրջաններու մէջ տարբերութիւններ կան, առանց շեղելու հիմնականէն, այդ կը նշանակէ որ մենք յաջողութեան ճամբան գտած ենք, որովհետեւ առանց պայմաններու յարմարելու կարելի չէ գործել, կարելի չէ յաջողութիւն արձանագրել:

Վարձքը կատար կ'ըսենք ընթացաւարտ կեդրոնական վարչութեան, որ գործեց ծանր պայմաններու տակ եւ հակառակ ատոր ունեցաւ փայլուն յաջողութիւններ, որոնցմէ հիմնականը այն անդրադարձն է, որմով զբաղեցաւ այս ժողովը, նոր ռազմավարութեան, իրապաշտ ռազմավարութեան մշակումով:

Յաջողութիւն նորընտիր կեդրոնական վարչութեան, որուն կողքին ենք եւ ծառան ենք:

ԱԶԳԱՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՀԱՅԱԿԵՐՏՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՒԷՐՆԵՐԷՆ ԱՆԴԻՆ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԸՆԹԱՑԱԻԱՐՏ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ԳՐԻԳՈՐԻՍ ՊՈՂԱՐԵԱՆԻ ԽՕՍԲԸ՝ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական 10րդ Ընդհանուր ժողովը այսօր հաւաքուած է ոչ միայն քննարկելու եւ արժեւորելու ընթացաւարտ կեդրոնական վարչութեան քառամեայ գործունէութիւնը, այլեւ՝ կողմնորոշելու եւ ուղղութիւն տալու միութեան երթին՝ այս պատկառելի ժողովին որդեգրելի ռազմավարական ծրագրաւորումին տրամադրութեանց համաձայն: Պատգամաւորական այս ժողովը կոչուած է ազգապահպանման ու հայակերտման սովորական մարտահրաւէրներէն անդին անցնելու, դիմագրաւելու համար Միջին Արեւելեան երկիրներու քաղաքական եւ քաղաքացիական նորօրեայ զարգացումներուն կապուած դժուարութիւնները, արեւմտեան երկիրներու մէջ օրըստօրէ առաւել սուր դարձող համաշխարհայնացումի վտանգը, նորաստեղծ Սփիւռքի համայնքներու գէթ մարզական եւ սկաուտական պահանջները եւ Հայաստան-Արցախ-Ջաւախք եռեակի հզօրացման առնչուած այն հարցերը, որոնց լուծման կապակցութեամբ Հ.Մ.Ը.Մ. ընելիք ունի:



Դիմագրաւելի մարտահրաւէրները շատ են եւ բազմատեսակ, սակայն Հ.Մ.Ը.Մ. առանձինն չէ որ պայքար կը տանի: Բարեբախտաբար, դժուարութիւնները յաղթահարելու աշխատանքը համահայկական եւ հաւաքական բնոյթ ստացած է, եւ այս պահուս ուրախութիւնն ունինք այս գործընթացի

մեր ուղեկիցներէն ներկայացուցիչներ ունենալու մեր մէջ: Այս առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան անունով շնորհակալութիւն կը յայտնեմ անոնց եւ անգամ մը եւս կը վերահաստատեմ Հ.Մ.Ը.Մ.ի խոր հաւատքը եւ հաստատակամութիւնը շարունակելու միջ-միութենական գործակցութիւններն ու յարաբերութիւնները՝ ի խընդիր համազգային հարցերու հետապնդման ու բարօք լուծման, եւ համահայկական

շահերու պահպանման եւ ամրապնդման: Շնորհակալական խօսք ունինք նաեւ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ զոյգ գահակալներուն, որոնք իրենց Հայրական յորդորներով, բարեմաղթութիւններով եւ աղօթքներով միշտ նեցուկ եղան Հ.Մ.Ը.Մ.ին: Շնորհակալութիւն հայրենի իշխանութեանց, որոնք գիտակից համահայկական շահերու եւ իրազեկ Հ.Մ.Ը.Մ.ի ազգանուէր գործունէութեան, անվարան հասան Հ.Մ.Ը.Մ.ի օգնութեան, ամէն անգամ որ պատկան ծառայութեանց օժանդակութեան դիմուեցաւ: Վերջապէս, շնորհակալութիւն այն բոլոր Հ.Մ.Ը.Մ.ական քոյրերուն եւ եղբայրներուն, որոնց միացեալ ճիգերով կարելի եղաւ իրականացնել անցնող չորս տարիներու մեր գործունէութիւնը: 10րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովը կոչուած է նաեւ պատրաստելու միութենական աշխատանքներու նա-

խածրագիրը Մեծ Եղեռնի 100ամեակի, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 95ամեակի, Հայաստանի Հանրապետութեան հռչակման եւ Արցախի ազատագրման յաջորդական տարեդարձներուն առիթով:

Կատարուելիք աշխատանքները իրենց տարողութեամբ եւ ապագայի հաշուոյն ունենալիք անդրադարձով շատ ծանր բեռ մը կը դնեն Պատգամաւորական Ժողովի մասնակիցներուն ուսերուն:

Սակայն, կը հաւատանք, որ մասնակիցներէն իւրաքանչիւրը գինուած Հ.Մ.Ը.Մ.ի վսեմ գաղափարախօսութեամբ եւ խորապէս գիտակից իրեն վստահուած առաքելութեան, լաւագոյնս պիտի կատարէ իրմէ պահանջուածն ու ակնկալուածը: Յաջողութիւն կը մաղթենք Ժողովին, ի փառս Հ.Մ.Ը.Մ.ին եւ ի պայծառութիւն ազգիս հայոց:

ՆՈՐ ՄՏՔԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀՈՐԻԶՈՆՆԵՐ ԲԱՅԵԼ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ԱՌՋԵԻ

(ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ «ԱՐԱՐԱՏ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍԲԸ՝

Հ.Մ.Ը.Մ.Ի 10ՐԴ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԲԱՅՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական 10րդ Ընդհանուր Ժողովի յարգարժան նախագահութիւն,

Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութեան Կենտրոնական Վարչութեան ու բոլոր անդամների անունից ողջունում ու շնորհակալութեան խօսք ենք յայտնում Ձեզ՝ սիրելի Հ.Մ.Ը.Մ.ական քոյրեր ու եղբայրներ, որ կրկին անգամ առիթ է ստեղծուել ներկայ լինելու Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին:



Թեհրանի իր երկու կենտրոնատեղիներով՝ արուեստի «Կոմիտաս» սրահով ու «Արարատ» Մարզաւանի 73.000 մ. տարածքով, իր անփոխարինելի դերն ունի նոր սերունդների հայեցի դաստիարակութեան գործում:

Հարկ է նշել, այս տարի լրանում է Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութեան սկստական միութեան 60ամեակը: Այս երկար տարիների ընթացքում միութիւնը իր մեծ դերն է ունեցել

կազմակերպութեան յարկի տակ աշխատելով՝ շունչ ու ոգի ներշնչել հայ նոր սերնդին:

Բացի Հ. Մ. «Արարատ» Կազմակերպութիւնը, Թեհրանում աշխատում են գաղափարակից մարզամշակութային քոյր միութիւններ, որոնցից են Հ. Մ. «Սիփան» միութիւնը՝ հայաշատ քաղաքամասում, որը այս տարի օժտուեց ազգային իշխանութեան օգնութեամբ իր մարզասրահով ու այլ յարմարութիւններով: Իսկ միւս քոյր միութիւններն, ինչպէս Հ.Մ. «Նայիրի» եւ Հ.Մ. «Սարգարապատ» միութիւնները ունեն իրենց կազմակերպական անկախ կառույցը եւ աշխատում են իրենց քաղաքամասերում, աշխատանք են տանում մարզական, սկստական եւ մշակութային բնագաւառներում:

Սիրելի քոյրեր եւ եղբայրներ,

Ինչպէս միշտ, սերտ են եղել երկու գաղափարակից քոյր միութիւններ՝ Հ.Մ.Ա.Կ.ի եւ Հ.Մ.Ը.Մ.ի յարաբերութիւնները եւ մենք միշտ վայելել ենք Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքի ջերմ վերաբերմունքը մեր նկատմամբ: Այդ ուշադրութեան ապացոյցն է մեր սկստների եւ մարզիկների մասնակցութիւնը Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 9րդ սկստական բանակումին, Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 8րդ մարզական խաղերին եւ սկստա-

Վստահ նման առիթները պիտի դրականօրէն ազդեն գաղափարակից մեր միութիւնների գործունէութեան վրայ, միասնաբար դիմագրաւելու մեր դէմ ծառայած դժուարութիւնները եւ աշխատանքային նոր հորիզոններ պիտի բացեն իրանում աշխատող մեր Կազմակերպութեան եւ քոյր միութիւնների համար:

Ինչպէս տեղեակ էք, իրանում գոյութիւն ունեցող երեք թեմերի քաղաքներում աշխատում են 20ից ավելի մարզամշակութային, ուսանողական-համալսարանական, բարեսիրական, հայրենակցական, կանանց եւ այլ միութիւններ, որոնց խոչորագոյնն է «Արարատ» Կազմակերպութիւնը՝ շուրջ 2000 անդամներով, Թեհրանում եւ չորս կենտրոններում (Թաւրիզ, Ուրմիա, Գեարդաբադ եւ Շիրազ) ունեցած մասնաճիւղերով:

Հ.Մ.Ա.Կ.ը մարզական ու սկստական աշխատանքների կողքին ծաւալում է նաեւ մշակութային գործունէութիւն:

Անցնող 67 տարիներում, կարողացել է իր հնարաւորութիւնները զարգացնելով, լիովին սպասարկել իր անդամներին ու իրանահայութեան: Այսօր «Արարատ Կազմակերպութիւնը

կան խմբապետական եւ ռազմավարական ծրագրաւորման համագումարներին, քոյր մասնաճիւղերի առաջին սկաուտական բանակումին: Նաեւ կազմակերպութեան աղջկանց պասքեթպոլի խմբի հիւրընկալութիւնն ու ընկերական-նախապատրաստական խաղերի համադրութիւնները՝ Սիրիոյ մասնաճիւղի Շրջանային Վարչութեան հետ: 2009 եւ 2011 թուի Յունուարին, մեծ պատիւ ունեցանք հիւրընկալելու Հ.Մ.Ը.Մ.ի Կենտրոնական Վարչութեան յարգելի ատենապետ՝ եղբայր Գրիգորիս Պողարեանին Հ.Մ.Ա.Կ.ի 23րդ եւ 24րդ Պատգամաւորական Ժողովներին՝ Թեհրանում:

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը Հայաստանի առաջին անկախ Հանրապետութեան օրոք՝ Հայաստանում գործունէութիւն է ծաւալել, իսկ Հայաստանի խորհրդայնացումից յետոյ տարագրուեց Սփիւռքում, բայց եւ մնաց կանգուն եւ հզօր, քայլեց դէպի ապագայ ու Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ, Հայաստանի երկրորդ անկախ

հանրապետութեան առաջին իսկ օրերից վերընձիւղուեց մայր հայրենիքում ու այսօր իր առաջ բացուած է գործունէութեան մի ընդարձակ ու լայն դաշտ՝ Հայաստանում ու Սփիւռքի հայահոծ բոլոր գաղութներում միաժամանակ:

Վերոյիշեալ նպատակներին առաւել ծառայելու առումով, եւ ի նկատի ունենալով աշխարհում առաջացած արդիականացած հնարաւորութիւնները ու երիտասարդութեան առաջընթացը այդ ուղղութեամբ, պէտք է նոր մտքերով աշխատանքների հորիզոններ բացել երիտասարդութեան առջեւ ու օգտուել իրենց մտքերից կազմակերպչական աշխատանքներում, ու նաեւ ուշադրութիւն դարձնել ժամանակակից գոյութիւն ունեցող հարցերը իրենց նկատմամբ:

Վերջում՝ պատիւ ունեմ խօսքս ուղղելու Հ.Մ.Ը.Մ.ի 10րդ Պատգամաւորական այս պատկառելի ժողովին մասնակցող բոլոր քոյր-եղբայրներին, մաղթելով աշխատանքային բեղուն գործունէութիւն ու բարի երթ:

ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՆՈՐ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆ ՄԵՐ ԱՄԷՆՕՐԵԱՅ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

(ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԱՆ ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍԲԸ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի 10ՐԴ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան տասներորդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի յարգելի մասնակիցներ, Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան անունից ողջունում եմ ձեզ եւ ցանկանում արդիւնաւէտ աշխատանք:



Ժամանակները մեր պետութեանը եւ ժողովրդին կանգնեցրել են նոր եւ դժուարին մարտահրաւէրների առջեւ, որոնց դիմագրաւումը մեզանից պահանջում է ժամանակներին համահունչ ռազմավարութիւնների, կառույցների, ղեկավարման մեթոտների եւ ոճերի որդեգրում: Անհրաժեշտ է նոր մտածողութիւն մեր ամէնօրեայ աշխատանքներում նոր որակների հասնելու համար: Այդ նոր որակների կրողը, հայկական քաղաքակրթութեան զարգացումն ապահովողը լինելու է ազգային եւ համամարդկային բարձր արժէքներով ապրող հայը, որի կազմաւորման եւ համակողմանի դաստիարակութեան առաջին գծում, ինչպէս տասնամեակներ շարունակ, այնպէս էլ հիմա, կանգնած է Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը:

Այսօր մենք իրաւամբ հպարտանում ենք տարբեր մարզաձեւերում համաշխարհային նուաճումների հասած հայ մարզիկներով, սակայն մեզ համար անհամեմատ մեծ եւ գնահատելի արժէք է պատասխանատու քաղաքացիութեան եւ անձնագոհութեան ոգով դաստիարակուած, առողջ, աշխատասէր եւ անկոտորում կամքի տէր բազմահազար հայ անհատների հաւաքականութիւնը, որոնց աշխատանքն ու ստեղծագործ

ութիւնը մեր լինելութեան եւ զարգացման գրաւականն են, երկրի յաւերժութեան հիմքը: Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնը մշտապէս եղել է այդպիսի սերունդների դաստիարակութիւնը, այդպիսի հաւաքականութիւնների ստեղծումը եւ ժամանակների առաջադրած խնդիրներին համապատասխան նրանց վերակերտումը: Ակնյայտ է, որ բարոյական եւ զաղափարական բարձր արժանիքներով օժտուած, հոգեպէս եւ մարմնապէս առողջ հայ անհատներն են մշտապէս կազմել մեր ազգային մարմնի այն վարակամերժ համակարգը, որը պաշտպանել է մեզ մարդկային այլասերող բարքերից, ամայացնող նիւթապաշտութիւնից, տարբեր ժամանակների

ապագագային, այլադաւան եւ տարատեսակ վտանգներին:

Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին մասնակցող սիրելի քոյրեր եւ եղբայրներ, մեր ժողովուրդը վաղուց բարձր է գնահատել ձեր կատարած աշխատանքը, զանգուածաբար ներգրաւուելով կազմակերպութեան աշխատանքներում: Մեր ժողովուրդը հաւատացել է ձեր հուշակած արժէքներին, ամէն կերպ աջակցել ու խրախուսել է ձեզ, Հ.Մ.Ը.Մ-ը համարել է իրենը:

Կասկած չունեմ, որ այս Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը եւս, որի մասնակիցներն իրենց անուրանալի ներդրումն ունեն Հ.Մ.Ը.Մ-ական գործի մէջ, նոր լիցք եւ աւելն է

հաղորդելու, առողջութեան եւ զուարթութեան խորհրդանիշ, մշտապէս երիտասարդ մեր կազմակերպութեան գործունէութեանը: Չափազանց մեծ է եւ պարտաւորեցնող անցեալի ժառանգութիւնը, կասկածից դուրս է ապագայ անելիքների կարեւորութիւնը: Եղբայրական սիրոյ միջնորդութեամբ ծնուած որոշումների շահառուն լինելու է հայ մարդը, նրա ընտանիքը, Հայաստանի Հանրապետութիւնը եւ հայութիւնն ընդհանրապէս:

Ի սրտէ յաջողութիւն ենք ցանկանում ժողովի աշխատանքներին:

ՄԵՆՔ ՊԱՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՆՔ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԼԻՆԵԼ ՅԱՆՈՒՆ ՀԶՕՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ՀԶՕՐ ՍՓԻՒՌԻ

(Հ.Հ. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՅՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔԸ՝ Հ.Մ.Ը.Մ-Ի 1007 ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ)

Հայ Մարմնակարթական Ընդհանուր Միութեան 1007 Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի յարգելի մասնակիցներ,

Ողջունում եմ բոլորիդ, ողջունում եմ ոչ որպէս հիւրերի, այլ որպէս մարդկանց, ովքեր հարազատ երկրում են, քանի որ շուրջ 95ամեայ իր գործունէութեան ընթացքում, Հայ Մարմնակարթական Ընդհանուր Միութիւնը մըշտապէս կապուած է ժողովրդին, թէ ստեղծման առաջին օրերին՝ անցեալ դարասկզբին, հայութեան համար ծանրագոյն տարիներին, թէ այսօր, միութիւնը մտահոգ է հայրենիքի ճակատագրով, հայ մարդուն կարագրով: Որպէս մի մեծ ընտանիք, կազմակերպութիւնը շուրջ 102 մասնաճիւղերով եւ աշխարհի տարբեր երկրներում գտնուող աւելի քան 25 հազար անդամներով, ունի ազգապահպան ու դաստիարակչական նշանակութիւն: Լինելով համահայկական պատանեկան-երիտասարդական կազմակերպութիւն՝ այն իսկապէս մեծ դերակատարութիւն ունի Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւնների զարգացման գործում: Հետեւում էք եւ գիտէք, որ Հայրենիքում մշտապէս անցկացւում են համահայկական միջոցառումներ, որոնք հէնց այդ նպատակն են հետապնդում:

Մասնաւորապէս, անցեալ ամիս Հայաստանում տեղի ունեցան համահայկական հերթական խաղերը, մի քանի օր յետոյ կայանալու է Հայաստան-Սփիւռք համաժողովը, մի քանի տարի է գործողութեան մէջ է «Արի տուն» ծրագիրը եւ



Հայաստանի Ազգային ժողովի նախագահին խօսքը կը փոխանցէ աշխատակազմի ղեկավար Յովիկ Աբրահամեան:

այլն: Այս ամէնի ելակէտը մէկն է՝ Հայաստանն ու ըՍփիւռքը միասին աւելի մեծ հնարաւորութիւն ունեն հասնելու մեր համագգային նպատակներին, քան առանձին-առանձին, որովհետեւ Հայաստանն ուժեղ է Սփիւռքով, Սփիւռքը՝ Հայաստանով, բազմաթիւ երակներով փոխ կապակցուած ենք միմիանց, որոնցից մէկն էլ դուք էք:

Յարգելի մասնակիցներ, Խորհրդանշական է, որ ձեր հերթական ժողովն անցկացւում է Հայաստանի անկախութեան հուշակման 20ամեակի օրերին: Հայաստանը ոչ թէ աշխարհագրական տարածք է, այլ՝ հայրենիք, որ բոլոր հայերինն է՝ անկախ նրանց գտնուելու վայրից: Բայց ես ցանկանում եմ, որ ձեր կապը հայրենիքի հետ լինի ոչ թէ խորհրդանշական, այլ՝ գործնական: Ես համոզուած եմ, որ բոլորիդ մէջ ամուր նստած է հայի այն պրպտուն ոգին, որ մշտապէս իր կարողութիւններն իրացնելու հնարաւորութիւն եւ ասպարէզ է որոնում: Հայաստանը լաւագոյն վայրն է այդ ամէնի համար եւ զգացմունքային վերաբերմունքից գատ, նաեւ այդ զգացմունքների գործնական դրսեւորումների կարիքն ունի, ինչին դուք ընդունակ էք: Որովհետեւ երիտասարդութիւնն այն ուժն է, որ իւրաքանչիւր երկրի ու հասարակութեան կեանքում թարմութիւն եւ ակտիւութիւն է բերում:

Մենք մեծ ուշադրութիւն ենք դարձնում պատանիների ու երիտասարդութեան հետ կապին ու նրանց հետ տարուող աշխատանքներին: Մի քանի տարի է, Ազգային ժողովում իրա-

կանացում է «Բաց դաս» ծրագիրը, որի շրջանակներում դպրոցների բարձր դասարանցիներն այցելում են Ազգային ժողով, անմիջականորեն ծանօթանում նրա աշխատանքներին, շփում խորհրդարանի ղեկավարութեան եւ պատգամաւորների հետ: Մի քանի ամիս առաջ ձեւաւորուել է երիտասարդական խորհրդարան: Այն հարթակ է ոչ միայն երիտասարդութեան, այլեւ ողջ երկրին վերաբերող խնդիրների քննարկման, ինչու չէ՝ նաեւ լուծումներ առաջարկելու համար, որովհետեւ մենք հնարաւորութիւն ենք ստեղծել, որ երիտասարդական խորհրդարանի անդամները մասնակցեն նաեւ Ազգային ժողովի եւ նրա յանձնաժողովների աշխատանքներին՝ անմիջական մասնակցութիւն ունենալով օրէնսդիրի աշխատանքին: Եթէ Սփիւռքի մեր երիտասարդներից եւս ցանկացողներ լինեն մասնակցել նրա աշխատանքներին, պատրաստ ենք աջակցելու, նրանց ընդգրկելու յաջորդ երիտասարդական խորհրդարանում: Եւ ընդհանրապէս, պատրաստ եմ աջակցել իւրաքանչիւր ողջմիտ քայլի ու նախաձեռնութեան, որը կարող է աւելի մերձեցնել ու միաւորել հայրենիքն ու ողջ աշխարհով սփռուած մեր հայրենակիցները: Մենք ոչ միայն պարտաւոր ենք, այլեւ պարտադրուած ենք միասնական լինել՝ յանուն հզօր Հայաստանի ու հզօր Սփիւռքի, յանուն նոր յաղթանակների, յանուն մեր ընդհանուր շահերի եւ նպատակների:

Եւս մէկ անգամ ողջունում եմ Ձեզ եւ մաղթում արգասաբեր աշխատանք:

ԱՐԴԻԲՆԱԲԷՏ ԱՇԽԱՏԱՆՔ

(Հ.Հ. ՄՊՈՐՏԻ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔԸ)

Կենտրոնական վարչութեան յարգելի անդամներ, Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի մասնակիցներ, հիւրեր:

Հայաստանի Հանրապետութեան սպորտի եւ երիտասարդութեան հարցերի նախարարութեան եւ անձամբ իմ անունից ողջունում եմ Ձեզ Պատգամաւորական 10րդ Ընդհանուր Ժողովի մեկնարկի կապակցութեամբ:

Յօբելեանական 10րդ ժողովին մաղթում եմ յաջող ընթացք եւ արդիւնաւէտ աշխատանք:

Գոհունակութեամբ ձեզ եմ փոխանցում «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան առաջնորդ, յարգարժան պարոն Գագիկ Ծառուկեանի ջերմ ողջոյնները եւ բարի մաղթանքները, ինչպէս նաեւ պարոն Ծառուկեանի համագործակցելու եւ Ձեզ աջակցելու պատրաստակամութիւնը:

ԱՆԳՆԱՀԱՏԵԼԻ ԶԱՆՔԵՐ

(Հ.Հ. ՍՓԻՒՌԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔԸ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՏՊԱՄԱԻՈՐԱԿԱՆ 10ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ)

Հ.Մ.Ը.Մ.Ի Պատգամաւորական 10րդ Ընդհանուր Ժողովի մասնակիցներ,

Պատուարժան հիւրեր, Սիրելի հայրենակիցներ, Ձերմօրէն ողջունում եմ ձեզ Մայր Հայրենիքում, Ծաղկաձորի հոյակապ գրկում եւ մաղթում բեղմնաւոր, արգասաբեր եւ ազգանպաստ աշխատանք: Յատկանշական է, որ Հայաստանի անկախութեան 20րդ յօբելեանի նախօրէին Դուք Ձեր Պատգամաւորական Ժողովը գումարում էք հէնց Հայրենիքում:

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը ստեղծուեց Հայոց Յեղասպանութեան հետեւանքով աշխարհասփիւռ եղած հայ երիտասարդներին համախմբելու համար եւ աւելի



Սփիւռքի նախարար Բրանոյշ Յակոբեանի ողջոյնի խօսքը կը փոխանցէ ներկայացուցիչ Ա. Անդրեասեան:

քան ինը տասնամեակի ընթացքում Հայրենիքում եւ Սփիւռքում ծաւալեց մարզամշակութային բեղուն գործունէութիւն եւ առողջ մարմին կոփելով՝ դաստիարակեց Մայր Հայրենիքի ու հայ ժողովրդի ազգային նկարագրի եւ ժառանգութեան հանդէպ սիրոյ ու նախանձախնդրութեան զգացումով:

Մարմնամարզութիւնը, սպորտը կոփում են հայ երիտասարդի սիրտն ու միտքը մարզական ազնուագոյն ոգով, սովորեցնում նրան լինել աշխատասէր եւ արի, ազգասէր եւ հայրենասէր:

Կարիքի եւ ցաւի ժամանակներում Հ.Մ.Ը.Մ.ականները անմնացորդ նուիրումով ու անշահախնդիր բարեգործութեամբ ապրելու հնարաւորութիւն են ընձեռել եւ արարելու

ԽՈՂԵՐ ՔԱՌԱՄԵԱԿԻ ՄԸ ԱԲԱՐՏԻՆ

Գրիգորիս Պողարեան
ՊԵՅՐՈՒԹ

Մ.Ը.Մ.ի 10րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովը եկաւ վերջապէտ դնելու քառամեակի մը գործունեութեան, որ պատշաճօրէն քննարկուեցաւ: Քննարկում՝ որուն հիմամբ գնահատուեցաւ ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան աշխատանքը: Այսքանը արդէն սովորութիւն դարձած աւանդութեան մը հերթական կրկնութիւնը կարելի է նկատել: Սակայն, 10րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովը Յ.Մ.Ը.Մ.ի պատմութեան մէջ պիտի արժանանայ եզակի մատնանշումի, որովհետեւ, ի տարբերութիւն նախորդ ժողովներու, այս ժողովը չբաւականացաւ լոկ յաջորդ քառամեակի գործունեութեան նախագիծը մշակելով, այլ՝ հանգամանօրէն սերտեց, քննեց, բարեփոխեց եւ գործադրութեան ազդանշանը տուաւ ռազմավարական երկարաշունչ ծրագրի մը: Ծրագիր, որ արգասիքն էր տարիներու վրայ երկարող տքնաջան աշխատանքի եւ պտուղը՝ հաւաքական ճիգի, որուն մէջ առիւծի բաժինը կ'երթայ Ռազմավարական Ծրագրաւորումի Յանձնախումբին, առանց մոռնալու հարիւրաւոր անդամներու, վարչականներու,

համակիրներու եւ Յ.Մ.Ը.Մ.ով հետաքրքրուած եւ ազգային հարցերով մտահոգ հայրենակիցներու ներդրումը: Ռազմավարական ծրագիրը ազգային կեանքէն ներս սպասուած նորութիւններ բերելէ անդին՝ կը հանդիսանայ ցուցանիշ մը, թէ Յ.Մ.Ը.Մ. ո՛չ միայն ինքնանորոգ եւ միշտ պատնէշի վրայ եղող միութիւն մըն է, այլեւ՝ միութիւն, որ կը յատկանշուի հեռատեսութեամբ. շրջահայեացութեամբ, նորարութեամբ եւ մարտահրաւերները աներեր դիմագրաւելու պատրաստակամութեամբ, պատրաստութեամբ ու քաջութեամբ: Քառամեակի մը աւարտին եւ յանուն ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան շնորհակալական խօսք՝ իւրաքանչիւր Յ.Մ.Ը.Մ.ականի, կակուղ թաթիկէն մինչեւ ալեհեր ծերունին եւ մանաւանդ բոլոր անոնց, որոնք զանազան հանգամանքներով իրենց մասնակցութիւնը բերին քառամեակի աշխատանքներուն: Վարձքը կատար բոլորին: Բարեմաղթութիւններ եւ յաջողութեան մաղթանքներ նորընտիր Կեդրոնական Վարչութեան: Թող Յ.Մ.Ը.Մ. շարունակէ իր յաղթական երթը շնորհիւ այս մեծ ընտանիքը կազմող անհատներու կազմակերպ, միակամ եւ կողմնորոշուած հաւաքական ջանքերուն:

Արդ, «Յառաջ նահատակ ցեղի անմահներ», նոր քառամեակներ ու նորանոր նուաճումներ արձանագրելու հաստատակամութեամբ:

ձգտումով համակել աւելի քան 20 հազար հայ որբ մանուկներին, մոլորուած հայ պատանիներին ու երիտասարդներին:

Անգնահատելի են միութեան ջանքերը՝ Սփիւռքում հայ ազգային ինքնութեան պահպանման, երիտասարդ սերունդներին հայեցի դաստիարակութեան, ազգային աւանդոյթների պահպանման, մարզական, սկստական գործունէութեան իրականացման ուղղութեամբ:

Ներկայումս Դուք, լինելով միութեան սերնդէ սերունդ փոխանցող աւանդոյթների ու շուրջ մէկ դարեայ բազմաբովանդակ գործունէութեան կրողն ու փոխանցողը, արժանապատուօրէն շարունակում էք Ձեր առաքելութիւնը՝ ծառայելով մէկ հիմնական նպատակի՝ հայապահպանութեանը:

Ձեր ձեռնարկները՝ մարզական տարբեր մրցաշարերի կազմակերպումը, սկստական բանակումները, հրատարակչական գործունէութիւնը, նպաստում են ոչ միայն մատաղ սերնդի առողջ կենսակերպի եւ ֆիզիքական դաստիարակութեան ապահովմանը, հայեցի կրթութեան ու ազգային արժէքների պահպանմանը, այլեւ՝ ապագայի վեհանձն մարդու, արժանապատիւ հայի, օրինապահ քաղաքացու ձեւաւոր-

մանը: Ինչպէս ասում են՝ «Առողջ մարմնում թեւածում է առողջ ոգի»:

Համայնքային կեանքում լինելով կարեւոր դերակատար, համախմբելով հայ երիտասարդութեանը սկստական եւ մարզական խմբերում՝ Ձեր գործունէութեամբ նպաստում էք նաեւ Հայրենիք-Սփիւռք կապերի ամրապնդմանը:

Ուժ ու եռանդ եմ մաղթում Ձեզ՝ Հայաստան-Սփիւռք գործակցութեան զարգացման, հայ երիտասարդներին Հայրենիքի շուրջ համախմբման եւ հայապահպանութեան նուիրական գործում եւ շնորհաւորում եմ բոլորիս Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 20ամեակի առիթով ու մաղթում միասնաբար ուժեղացնելու, հզօրացնելու մեր չնաշխարհիկ Հայրենիքը:



Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միության 10րդ Պարգամատրական Ժողովը փետի ունեցաւ 5-10 Սեպտեմբեր 2011ին, Ծաղկաշորի մէջ, Հայաստան, մասնակցութեամբ Շրջանային եւ Մեկուսի 18 շրջաններէ 57 պարգամատրներու եւ 35 հրատիրեայներու, որոնց կարգին՝ Իրանի Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութեան ներկայացուցիչը:



Ժողովը համապարփակ քննութեան ենթարկեց Հ.Մ.Ը.Մ.ի անցնող չորս փարիներու սերնդակերպման ու հայակերպման աշխատանքները, գնահատեց կատարուած իրագործումները եւ ապագայի հաշուոյն մշակեց նոր ծրագիրներ:

Պարգամատրական Ժողովը լայնօրէն անդրադարձաւ հայ սկստութիւնը, մարզական կեանքը եւ երիտասարդութիւնը յուզող հրատարակ հարցերուն եւ համապարասիան որոշումներով քայլեր առաջարկեց անոնց թափ փայլու նպատակով: Ժողովը քննեց նաեւ միութեան կազմակերպական ընդհանուր իրավիճակը եւ ընդգծեց Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհասփիռ մասնաճիւղերուն աշխատանքային դաշտերը ընդլայնելու կարելիութիւնները: Օրակարգի նիւթ դարձան նաեւ կանոնադրային փրամադրութիւններու կարգ մը բարեփոխութիւններ եւ միութեան «Մարզիկ» պաշտօնաթերթին եւ կայք էջին զարգացման վերաբերող ծրագիրներ:

Պարգամատրական 10րդ Ընդհանուր Ժողովը իր պարմութեան մէջ առաջին անգամ ըլլալով որդեգրեց Հ.Մ.Ը.Մ.ի յառաջիկայ փաստամեակներու զարգացման ռազմավարական ծրագիրը՝ համահայկական մօտեցումով (Հայաստան եւ Սփիւռք) խոր քննարկումի ենթարկելէ ետք զայն: Այս իմաստով, ժողովը առաւ հիմնական որոշումներ՝ հայ երիտասարդութեան ներգրաւման, Հայաստանի մէջ աշխատանքներու ընդարձակման, միութեան կազմակերպական կեանքի արդիականացման եւ արհեստագիտական նորագոյն միջոցներու օգտագործման համար:

Ռազմավարական ծրագիրը առանձին բաժիններով անդրադարձաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան եւ արժէքներու վերասահմանումի անհրաժեշտու-


թեան, միութեանական աշխատանքներու արժեւորման նոր մեթոդներու որդեգրման, հայ լեզուի գործածութեան զարկ փայլու միջոցներուն եւ յարկապէս՝ աշխարհասփիռ երիտասարդութեան հասանելի դառնալու շեւերուն: Այս ուղղութեամբ ժողովը յարուկ քելադրանք կատարեց Հ.Մ.Ը.Մ.ի նորընփիր Կեդրոնական Վարչութեան, որ պէտքի նախորդ քառամեակին ըսկսուած ռազմավարական ծրագրաւորումի աշխատանքը շարունակէ եւ անցնի որդեգրուած ծրագիրներու գործնականացման հանգրուանին:

Պարգամատրական 10րդ Ժողովը քննեց նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի 95ամեակի, 100ամեակի եւ Հայկական Տեղասպանութեան 100ամեակի ոգեկոչման կատարուած հարցեր:

Իր աշխատանքներու աւարտին, ժողովը ընտրեց յառաջիկայ քառամեայ նստաշրջանի նոր Կեդրոնական Վարչութիւնը, որ Ընդհանուր Ժողովի Դիւանին ներկայութեան իր դիւանը կազմեց հետեւեալ շեւով:

- Եղբ. Գառնիկ Մկրտիչեան - արեւնապետ (Լիբանան)
- Եղբ. Կարպիս Գապասագալեան - արեւնադպիր (Լիբանան)
- Եղբ. Միհրան Շիմշիրեան - գանչապահ (Լիբանան)
- Եղբ. Սյրեմիան Տէր Պետրոսեան (Լիբանան)
- Եղբ. Հրաչ Սիսեռեան (Եւրոպա)
- Եղբ. Բագրատ Եսայեան (Հայաստան)
- Եղբ. Գարլոս Սէֆերեան (Հարաւային Ամերիկա)
- Եղբ. Վիգէն Դաւթեան (Արեւմտեան Միացեալ Նահանգներ)
- Եղբ. Յակոբ Թիւֆէնքճեան (Արեւմտեան Միացեալ Նահանգներ)
- Եղբ. Հրաչ Մետրոպեան (Արեւելեան Միացեալ Նահանգներ)
- Եղբ. Արմէն Կէրիկեան (Գանապա)
- Եղբ. Վիգէն Քորթեան (Վուպրալիա)
- Եղբ. Կարպիս Թովմասեան (Սուրիա)

Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ
10ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԴԻՒԱՆ



Հ.Ս.Բ.Ս.
ԿԱՐԳԻՆ ՏԵՐ ԿԱՐԻՐ
ԿԵՐՈՆՆԻՒՄԸ ԵՎ

